ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՁԵԿՈՒՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՓՈՐՁՆԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ -2013

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱԱՀ ՄԱՍԻՆ 2

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ 4

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ 4

ՀԱԱՀ ԻՆՍՏԻՏՈՒՏԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 6

ՓՈՐՁՆԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻՈՆԱԼ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 9

I.ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 9

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 12

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 16

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ 19

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ և ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ 24

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 28

VII ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 31

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ Ը 35

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ 38

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 40

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ... 45

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 48

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ 50

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՅՑԵՐԸ 53

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱԱՀ ՄԱՍԻՆ

Հայաստանի ազգային ագրարային համալսարանը հանրապետության խոշոր բուհերից է: Որպես Հայկական գյուղատնտեսական ակադեմիա՝ կազմավորվել է 1994թ. Հայկական գյուղատնտեսական և Երևանի անասնաբուծական-անասնաբուժական ինստիտուտների միավորման արդյունքում, որոնք հիմնադրման օրվանից (1930թ.) բացառիկ դեր են ունեցել ինչպես ՀՀ, այնպես էլ նախկին Խորհրդային Միության այլ հանրապետությունների ագրարային ոլորտի համար որակյալ մասնագետների պատրաստման ու բազմաբնույթ գիտական հետազոտությունների իրականացման գործում:

Ագրարային համալսարանը, լինելով գյուղատնտեսական ոլորտի միակ պետական բուհը հանրապետությունում, ուսուցման եռաստիճան համակարգով բարձրագույն կրթությամբ կադրեր է պատրաստում 37 մասնագիտություններով, որոնց մի մասը եզակի է ոչ միայն տարածաշրջանում, այլև ԱՊՀ անդամ երկրների ագրարային բուհերի համար:

Կարևորելով ագրարային կրթությունը և հաշվի առնելով դրա առանձնահատկությունները՝ ՀՀ Կառավարությունը համալսարանի բոլոր մասնագիտությունների համար բակալավրային ուսուցման տևողությունը սահմանել է չորս տարի ութ ամիս, ավելի երկարատև են նաև ուսումնական, արտադրական և նախադիպլոմային պրակտիկաները:

Համալսարանի առկա ուսուցման համակարգում ուսանողների թիվը կազմում է մոտ 4400, հեռակա ուսուցման համակարգում՝ 5800, քոլեջում՝ 157: Մագիստրատուրայի առաջին և երկրորդ կուրսերում ագրարային համալսարանի բոլոր մասնագիտությունների գծով սովորում է ավելի քան 450 ուսանող: Առկա և հեռակա համակարգի ասպիրանտների թիվը 240 է, որից շուրջ 200-ը՝ Իրանի Իսլամական Հանրապետությունից, 4-ը՝ Սիրիայից:

Ագրարային համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումներն են ուսումնական մասը՝ առկա ուսուցման 7 ֆակուլտետներով (ագրոնոմիական, անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության, գյուղատնտեսության մեքենայացման և տրանսպորտային փոխադրումների, պարենամթերքի տեխնոլոգիաների, հիդրոմելիորացիայի, հողաշինարարության և հողային կադաստրի, տնտեսագիտության, ագրոբիզնեսի և շուկայաբանության), հեռակա և ագրոբիզնեսի ուսուցման դեպարտամենտներով, գյուղատնտեսական քոլեջով, վարժարանով և Ստեփանակերտի, Վանաձորի, Սիսիանի մասնաճյուղերով:

Գիտական կենտրոնի կառուցվածքային ստորաբաժանումներն են գյուղատնտեսության մեքենայացման, էլեկտրիֆիկացման և ավտոմոբիլային փոխադրումների, պարենամթերքի տեխնոլոգիաների, սննդի անվտանգության և կենսատեխնոլոգիայի գիտահետազոտական ինստիտուտները, պեստիցիդների, մշակաբույսերի գենոֆոնդի, էկոլոգիական և օրգանական գյուղատնտեսության, մելիորացիայի, ջրային պաշարների կառավարման, հողաշինարարության և երկրագործության, անասնաբուժության և անասնաբուժական փորձաքննության, գյուղատնտեսական կենդանիների կերակրման, գենետիկայի, մոլեկուլյար կենսաբանության և կենսատեխնոլոգիայի գիտական պրոբլեմային լաբորատորիաները, ասպիրանտուրայի, մագիստրատուրայի, հրատարակչական-խմբագրական, արտոնագրման բաժինները:

ՀՊԱՀ-ի կազմում այսօր արդեն առանձին և լիարժեք գործող բաժին է տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնը, որի ստորաբաժանումներն են՝ գրադարանը,

տեղեկատվական համակարգերի կառավարման բաժինը, տեղեկատվական տեխնոլոգիաների սպասարկման բաժինը, տեղեկատվական տեխնոլոգիաների գիտելիքի բաժինը, տեղեկատվության և հետազոտական ծրագրերի բաժինը, էլեկտրոնային ուսուցման համակարգչային կաբինետը և ինտերնետային կապի կաբինետը:

Տնտեսական մասի կառուցվածքային ստորաբաժանումներն են հաշվապահությունը, կադրերի և հատուկ, զինվորական հաշվառման, լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժինները, գրասենյակը, տնտեսական վարչությունը, ՀՊԱՀ-ի թանգարանը, «Զարթոնք» հանգստյան տունը, «Բալահովիտ» և «Ոսկեհատ» ուսումնափորձնական տնտեսությունների միավորումը:

Հանրապետության և միջազգային գիտակրթական հաստատությունների շարքում ագրարային համալսարանի ուրույն հեղինակությունն ապահովվում է բարձր որակավորում ունեցող պրոֆեսորադասախոսական ներուժի շնորհիվ (637 դասախոսներից 60-ը գիտությունների դոկտոր են, 310-ը՝ գիտությունների թեկնածու):

Համալսարանում գործում է դոկտորի գիտական աստիճան շնորհող մասնագիտական հինգ խորհուրդ՝ գյուղատնտեսության արտադրության մեքենայացման և մեքենաների, ագրոնոմիայի, անասնաբուժության, անասնաբուծության, գյուղատնտեսության արտադրության, տնտեսագիտության: Նշված խորհուրդներում դոկտորի և թեկնածուի գիտական աստիճան է շնորհվում ագրարային ոլորտի 17 մասնագիտությունների գծով:

Ագրարային համալսարանի գիտնականները բազմաթիվ հետազոտական ծրագրեր են իրականացնում մշակաբույսերի արժեքավոր սորտերի և գյուղատնտեսական կենդանիների ցեղերի գենոֆոնդի պահպանման ու բարելավման, անասնաբուժության, գյուղատնտեսական նոր մեքենաների և սարքավորումների նախագծման, բուսական ու կենդանական ծագման հումքի և մթերքի վերամշակման նոր տեխնոլոգիաների, էկոլոգիական, ջրային ու հողաշինարարական հիմնախնդիրների, բույսերի հիվանդությունների, վնասատուների և մոլախոտերի դեմ պայքարի արդյունավետ միջոցների ստուգման ու միջոցառումների մշակման, ինչպես նաև ագրարային տնտեսագիտական հիմնախնդիրների բնագավառներում: Համալսարանի գիտնականները վերջին տարիներին սերտորեն համագործակցում են միջազգային տարբեր գիտակրթական կառույցների հետ և կազմակերպում միջազգային գիտաժողովներ:

Ագրարային համալսարանի գրադարանը հանրապետության հնագույն գրադարաններից է: Այն ունի տարբեր երկրներում հրատարակված գիտական, ուսումնական և տեղեկատվական գրականության մոտ 550 հազար միավոր հարուստ գրքային ֆոնդ: ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության աջակցությամբ 2004-ից գրադարանում գործում է էլեկտրոնային գրադարանը: Պատշաճ մակարդակով կահավորված և տեխնիկապես հագեցած մի քանի ընթերցասրահներում անհրաժեշտ պայմաններ են ստեղծված գիտակրթական ու ստեղծագործական աշխատանքի համար:

Համալսարանը հայտնի է նաև իր հարուստ կենդանաբանական թանգարանով: Ներկայացված բազմաթիվ ցուցանմուշները հետաքրքրական են ոչ միայն ուսանողների և գիտնականների, այլև այցելուների համար: Բազմաբնույթ ցուցանմուշներով է հարուստ է նաև ՀՊԱՀ-ի պատմության թանգարանը:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

Հայաստանի ազգային ազրարային համալսարանի ինքնավերլուծության, կրթական և որակի ապահովման գործընթացների իրականացման արտաքին գնահատում կատարվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից.

- Պրոֆ. Մարինկա Բաղդասարյան, ՀՀ, փորձագիտական խմբի ղեկավար;
- Պրոֆ. Մարիա-Խոսե Լեմայտրե, Չիլի;
- Պրոֆ. Սամվել Պիպոյան, ՀՀ;
- Դոց. Մերի Բաղալյան, ՀՀ;
- Սյուզաննա Ազիզյան, ուսանող, ՀՀ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ-ի Ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման բաժնի ղեկավար, դոց. Անուշավան Մակարյանը:

Հավելված 1-ը պարունակում է փորձագիտական խմբի կազմի համառոտ ինքնակենսագրությունները:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Նախապատրաստական փուլ

Փորձնական Ինստիտուցիոնալ հավատարմագում անցնելու համար Հայաստանի ազգային ազրարային համալսարանը դիմել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամ (այսուհետ՝ ՈԱԱԿ)՝ լրացնելով սահմանված ձևաչափի դիմումը և ներկայացնելով լիցենզիայի և դրա հավելվածների կրկնօրինակները:

ՈԱԱԿ քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները, կից փաստաթղթերը և հաստատության կողմից լրացված ՈԱԱԿ-ի էլեկտրոնային հարցաշարը:

Դիմում հայտի ընդունման մասին որոշում ընդունելուց հետո ՈԱԱԿ-ի, Կրթական ծրագրերի կենտրոնի և բուհի միջև կնքվել է եռակողմ պայմանագիր: Կազմվել և հաստատվել է աշխատանքների իրականացման ժամանակացույց:

Ժամանակացույցով նախատեսված ժամկետներում հաստատությունը ներկայացրել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը հայերեն և անգլերեն լեզուներով ըստ ՈԱԱԿ-ի սահմանած ձևաչափի, ինչպես նաև ուղեկցող փաստաթղթերի փաթեթը:

ՀՊԱՀ ինքնավերլուծությունն իրականացրել է հատուկ այդ նպատակով ռեկտորի հրամանով ձևավորված խումբը:

Ինքնավերլուծության վերաբերյալ ՈԱԱԿ-ի տնօրենի հրամանով նշանակված հավատարմագրման գործընթացի համակարգողի դրական կարծիքը ստանալուց հետո՝ քարտուղարությունը այն ուսումնասիրման համար տրամադրել է փորձագիտական խմբին, որի կազմը նախօրոք համաձայնեցվել է համալսարանի հետ և հաստատվել ՈԱԱԿ տնօրենի հրամանով:

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով համալսարանի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը և նախապատրաստվելով փորձագիտական այցի՝ լրացրել է նախնական գնահատման ձևաչափը՝ իրականացնելով ինքնավերլուծության նախնական գնահատում, պատրաստելով ուսումնասիրման ենթակա խնդիրների և հարցերի ցանկը, ինչպես նաև այն ստորաբաժանումները կամ խմբերը, որոնց հետ հանդիպումների ժամանակ կարելի է պարզել հարցերի պատասխանները:

Նախնական այց

Գործընթացի համակարգողը, խմբավորված ուսումնասիրման ենթակա հարցերի և խնդիրների հիման վրա, փորձագիտական խմբի ղեկավարի հետ կազմել է այցի ժամանակացույց, որը համաձայնեցվել է հատատության հետ համակարգողի և խմբի ղեկավարի կողմից իրականացված նախնական այցի ժամանակ: Առաջնորդվելով ՈԱԱԿ-ի Փորձաքննության իրականացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են

փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, բաց և փակ հանդիպումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն, այցելություններ հաստատության ստորաբաժանումներ և այլն: Դիտարկվել են խմբին տրամադրվող սենյակը, հանդիպումների դահլիճը և տեխնիկական միջոցները: Համալսարանին ներկայացվել են ուսումնասիրման ենթակա փաստաթղթերի ցանկը, ստորաբաժանումները, ուր ցանկանում են այցելել փորձագետները և աշխատակիցների ցանկը, ում հետ նախատեսվում են հանդիպումներ:

Փորձագիտական այց

Այցը սկսվելու նախորդ օրը տեղի է ունեցել տեղացի փորձագետների հանդիպումը արտասահմանցի գործընկերոջ հետ.

- քննարկելու և համաձայնացնելու գնահատման շրջանակը;
- վերջնականացնելու և հաստատելու խմբի աշխատանքային մեթոդը;
- նախապատրաստվելու համդիպումներին և վերջնականացնելու հանդիպումների հարցերը;
- ներկայացնելու նախնական գնահատման արդյունքները:

Փորձագիտական խումբը այցն իրականացրել է դեկտեմբերի 3-ից 7-ը. ժամանակացույցը ներկայացված է **Հավելված 2**-ում: Այցին մասնակցել են խումբն ամբողջությամբ, համակարգողը, թարգմանիչը, քարտուղար-սղագրողը, դիտորդներ Սանդրա Տասինան և Ջեյմս Բայերսը Խաղաղության կորպուսից:

Այցը սկսվել և ավարտվել է ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարի հետ հանդիպումներով: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված հանդիպումների դասախոս, ամբիոնի վարիչ և ուսանող մասնակիցներին փորձագիտական խումբը ընտրել է պատահականության սկզբունքով հաստատության ներկայացրած ցուցակներից: Ինքնավերլուծությունը իրականացրած աշխատանքային խումբը, ԿԲՌՊՈՎԻ վարչության և գիտության դեպարտամենտի աշխատակազմերը հանդիպումներին մասնակցել են ամբողջությամբ: Փորձագետների կողմից ընտրված կազմի հետ հանդիպումներին մասնակցել են Ուսումնամեթոդական վարչության և Ստաժորների դպրոցի աշխատակիցները: Բաց հանդիպումը ժամանակացույցով նախատեսված էր, սակայն մասնակիցներ չգրանցվեցին:

Այցի ժամանակ փորձագիտական խումբը ռեսուրսների դիտարկում և փաստաթղթերի ուսումնասիրություն է իրականացրել համալսարանի մի շարք ստորաբաժանումներում, որոնց ցանկը ներկայացված է **Հավելված 4**-ում: ՈՒսումնասիրված փաստաթղթերի ցանկը ներկայացված է **Հավելված 3**-ում:

Այցի ավարտին տեղի ունեցած խմբի փակ հանդիպման ժամանակ ամփոփվեցին այցի հիմնական արդյունքները:

Փորձագիտական գնահատումը կատարվել է Հավատարմագրման պետական չափանիշների և չափորոշիչների և ՈԱԱԿ ընթացակարգերի շրջանակներում, որով նախատեսվում է գնահատման եռաստիճան սանդղակ՝ ***անբավարար, մասամբ բավարար և բավարար:*** Այդ սանդղակով փորձագիտական խումբը նախ առանձին-առանձին գնահատել է համալսարանի գործունեությունն ըստ առանձին չափորոշիչների, ապա նաև ըստ չափանիշների:

Փորձագիտական զեկույց

Այցի ավարտց հետո երկու շաբաթվա ընթացքում փորձագետները ներկայացրեցին իրենց անհատական հաշվետվությունները: Դրանց հիման վրա խմբի ղեկավարը և ՈԱԱԿ համակարգողը պատրաստեցին Փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը, որը համաձայնեցվեց փորձագետների հետ: Զեկույցի միայն փաստերի մասը ուղարկվեց համալսարանին՝ դիտողությունների և առաջարկությունների համար: Հաշվի առնելով համալսարանի որոշ դիտողություններ՝ խումբը փոփոխություններ կատարեց ***Չափանիշ 7-ի բ*** և ***է*** չափորոշիչների գնահատման արդյունքների ձևակերպումների մեջ և պատրաստեց Փորձագիտական զեկույցը՝ նրանում ներառելով դատողությունները, գնահատումը և խորհրդատվությունը:

ՀԱԱՀ ԻՆՍՏԻՏՈՒՏԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ. ՀԱԱՀ հեռանկարային զարգացման ռազմավարական հայեցակարգում հստակ ձևակերպված է համալսարանի առաքելությունը, այդ առաքելությունից բխող ռազմավարական նպատակը: Համալսարանը իրականացնում է կրթական ծրագրեր, որոնց շրջանավարտներին տրվող որակավորումները համապատասխանում են ՀՀ կրթության որակավորումները ազգային շրջանակին:
ՀԱԱՀ-ը տարբեր ուսումնասիրությունների միջոցով փորձում է վերհանել, քննարկել ու վերլուծել տարբեր շահակիցների կարիքները, սակայն կանոնակարգված և ներդրված հստակ մեխանիզմների բացակայությունը թույլ չեն տալիս դա իրականացնել արդյունավետորեն:

ՉԱՓԱՆԻՇ II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ. ՀԱԱՀ-ը կրթության որակի ապահովման գործընթացների բարելավման և դրանց վերահսկման մեխանիզմների ստեղծման համար իրականացրել է կառուցվածքային փոփոխություններ՝ հաստատելով նոր կառուցվածք և ստեղծելով կառուցվածքային նոր ստորաբաժանումներ, վերանայել է բուհի կառավարման համակարգը ապահովող որոշումներ կայացնելու գործընթացը և ուսումնասիրել է կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներով հաստատության ապահովվածության հարցերը:

Կառավարման նոր համակարգի արդյունավետության մասին համալսարանը կարող է դատել որակի կառավարման սկզբունքով իրականացված գործընթացների մեկ շրջափուլի արդյունքների վերլուծությունից հետո միայն:

ՉԱՓԱՆԻՇ III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ. Համալսարանի ՄԿԾ-ները համապատասխանում են ՀՀ ՈԱՇ-ին, սակայն ՄԿԾ-ների մեջ ներառվող առարկայական ծրագրերը մասամբ են նկարագրված ըստ ՈԱՇ-ի կողմից դրվող պահանջների (գիտելիք, հմտություն, կարողություն): Վերջին տարիներին ՀԱԱՀ-ում կատարված ուսումնական պլանների բովանդակային վերափոխումները և առարկայական ծրագրերի լրամշակումները նպատակաուղղված են եղել ապահովելու բարձրագույն կրթության երկաստիճան համակարգի ձևավորմանը: Դա որոշակիորեն նպաստել է ՀԱԱՀ ուսանողների և դասախոսների շարժունությանը: Սակայն ՄԿԾ-ների մեծ մասը վերանայվել է առանց շահակիցների կարիքների վերհանման, մասնագիտական և տեխնոլոգիական առաջընթացի հաշվառման, ինչը միտված չէ այնպիսի կրթական միջավայրի ստեղծմանը, որը կնպաստի աշխատաշուկայի պահանջների բավարարմանը և մասնագիտական կրթության արդյունավետության բարձրացմանը:

ՉԱՓԱՆԻՇ IV. ՌԻՍԱՆՈՂՆԵՐԸ. ՀԱԱՀ-ում ուսանողների կրթական կարիքների վերհանման հստակ քաղաքականությունը բացակայում է, իսկ իրականացվող միջոցառումներն ու գործող ընթացակարգերը դեռևս լիարժեք չեն ապահովում ուսանողների կրթական կարիքների վերհանումը և դրանց բավարարումը: Կրթական ծրագրերից ուսանողների բավարարվածության վերաբերյալ տեղեկատվության բացակայությունը հնարավորություն չի տալիս բարելավել մատուցվող կրթական ծառայությունների որակը: Այնուամենայնիվ, ուսումնամեթոդական կենտրոնի ԿԲՌՊՈՎԻ վարչության կողմից անցկացված «Բուհի ռեսուրսների և ծառայությունների որակի գնահատման» հարցումների մասնակիցները բավարարված են վարչական անձնակազմի հասանելիությունից և տրամադրած ծառայությունների արդյունավետությունից

Համալսարանում գործող կարիերայի զարգացման և խորհրդատվության կենտրոնը իր գործունեությունը հիմնականում ծավալում է «Ագրոբիզնես»-ի դեպարտամենտի ուսանողների համար, սակայն կուտակված դրական փորձը չի տարածվում համալսարանի

մյուս ֆակուլտետների վրա: Արդյունքում՝ ցածր է ՀԱԱՀ աշխատանքի տեղավորման և խորհրդատվության բաժնի, որպես ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ մատուցող կառույցի գործունեության արդյունավետությունը:

ՉԱՓԱՆԻՇ V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ և ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ. Համալսարանը ունի բարձրակարգ, բայց տարեց դասախոսական կազմ: Մասնագիտական կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության վերաբերյալ հստակ պլանավորումը բացակայում է: Համալսարանի կադրային ներուժի համալրման և բարելավման գործընթացն ընդգրկում է ասպիրանտուրայում ուսուցման միջոցով երիտասարդ կադրերի պատրաստումը, դասախոսական կազմի պարբերական վերապատրաստումն ու ստաժորների ինստիտուտի ներդրումը:

Չնայած համալսարանում քայլեր են ձեռնարկվում մասնագիտությունների կրթական ծրագրերի համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունության համար, սակայն լուրջ խնդիրներ կան անձնակազմի երիտասարդացման գործում:

ՉԱՓԱՆԻՇ VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ. Համալսարանում իրականացվում են հետազոտություններ, առկա է հետազոտությունների իրականացման հստակ պլանավորում, իրականացվում են որոշակի գործընթացներ, սակայն բացակայում են հստակ քաղաքականությունը և ընթացակարգերը:

Համալսարանում իրականացվում են գործընթացներ, որոնք միտված են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցմանը, սակայն դրանք կանոնակարգված բնույթ չեն կրում: Հետազոտության արդյունքների դասավանդման պրոցեսում կիրառելը և մագիստրատուրայի ու ասպիրանտուրայի ուսանողներին հետազոտության մեջ ներգրավելը վկայում են դասավանդման և հետազոտության միջև կապի առկայության մասին: ՀԱԱՀ-ը չի գնահատել, իսկ առկա վերլուծությունները բավարար չեն գնահատելու հետազոտություններ-ուսումնական գործընթաց կապի արդյունավետությունը:

ՉԱՓԱՆԻՇ VII ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ. Համալսարանի ուսումնափորձնական տնտեսությունների, անասնաբուժական կլինիկաների, գրադարանի, ընթերցասրահների, SS կենտրոնի, լսարանների և լաբորատորիաների առկայությունը բավարարում են համապատասխան մասնագիտական կրթության իրականացման համար, սակայն նյութատեխնիկական հագեցվածության աստիճանը դեռևս բավարար չէ:

Համալսարանն իր առաքելությունը և նպատակներն իրականացնելու համար հատկացնում է այնքան ֆինանսական ռեսուրսներ, որքան թույլ են տալիս բուհի ֆինանսական հնարավորությունները: Մի կողմից այդ ռեսուրսները չեն բավականացնում, որպեսզի ստորաբաժանումները անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով ապահովվեն, մյուս կողմից էլ բաշխման հստակ քաղաքականության բացակայության պայմաններում չի իրականացվում առաջնահերթությունների վերհանում և համապատասխան պլանավորում ըստ այդ առաջնահերթությունների:

ՉԱՓԱՆԻՇ VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ. Համալսարանում առկա է տարեկան հաշվետվության կազմման գործընթաց, հստակ կանոնակարգված են հաշվետվողականության ներքին ձևերը, իսկ արտաքին ձևերը դեռևս կարիք ունեն կանոնակարգման և նպատակային դարձնելու: Տրամադրվող հաշվետվողականության թափանցիկությունը և հասանելիությունը շահակիցների լայն խավերին՝ դեռևս կատարելագործման կարիք ունի:

Համալսարանում գործում են հասարակությանը «գիտելիքի (արժեքների) փոխանցման մեխանիզմներ», սակայն չեն ստեղծվել հասարակության հետ կապերի ձևավորմանը

նպաստող հետադարձ կապի այնպիսի մեխանիզմներ, որոնք հնարավորություն կստեղծեին մասնագիտական կրթության որակի բարելավմանը և կրթական գործընթացի կազմակերպման արդյունավետության բարձրացմանը միտված որոշումների ընդունմանը:

ՉԱՓԱՆԻՇ IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ. Համալսարանը կարևորում է արտաքին կապերը և իր գործունեության միջազգայնացման ուղղությամբ իրականացվող ամեն մի քայլ՝ միաժամանակ գիտակցելով ոլորտում առկա խնդիրները:

Համալսարանը ֆինանսական միջոցներ չի հատկացնում միջազգային հաստատությունների և կառույցների հետ համագործակցման գործառույթների իրականացման համար: Անհրաժեշտ ծախսերը հոգում են կամ արտաքին կազմակերպությունները, կամ մասնակիցները: Այսպիսով, համագործակցության միջազգային ֆինանսավորման ընդհատման պարագայում այս գործառույթների կայունությունը կարող է վտանգվել:

ՉԱՓԱՆԻՇ X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ. ՀԱԱՀ-ն ունի որակի ներքին ապահովման քաղաքականություն, սակայն քիչ են հավաստող փաստերը, որ այդ քաղաքականությունը գործում է: Ներկայումս համալսարանում որակի ապահովման հիմնական շարժիչ ուժն են հանդիսանում ավելի շատ արտաքին պահանջները:

Համալսարանը մեծ պարտավորվածություն է ցուցաբերել որակի և որակի ապահովման նկատմամբ: Տրամադրել էն անհրաժեշտ ռեսուրսները այդ գործընթացների իրականացման համար:

Այնուամենայնիվ, որակի ապահովման ներքին համակարգը կայացման փուլում է և ընթանում են որոշակի գործընթացներ, սակայն դեռևս սպասվում է, որ պետք է մշակվեն մեխանիզմները, որոնցով կապահովվեն նաև անհրաժեշտ հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման համար:

ՉԱՓԱՆԻՇ I. Առաքելությունը եվ նպատակները.	*մասամբ բավարար*
ՉԱՓԱՆԻՇ II. Կառավարումն ու վարչարարությունը.	*մասամբ բավարար*
ՉԱՓԱՆԻՇ III. Մասնագիտության կրթական ծրագրերը.	*մասամբ բավարար*
ՉԱՓԱՆԻՇ IV. ՈՒսանողները.	*մասամբ բավարար*
ՉԱՓԱՆԻՇ V. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը.	*մասամբ բավարար*
ՉԱՓԱՆԻՇ VI. Հետազոտությունը եվ զարգացումը.	*մասամբ բավարար*
ՉԱՓԱՆԻՇ VII. Ենթակառուցվածք եվ ռեսուրսներ.	*մասամբ բավարար*
ՉԱՓԱՆԻՇ VIII. Հասարակական պատասխանատվությունը.	*մասամբ բավարար*
ՉԱՓԱՆԻՇ IX. Արտաքին կապերը եվ միջազգայնացումը.	*մասամբ բավարար*
ՉԱՓԱՆԻՇ X. Որակի ներքին ապահովման համակարգը.	*մասամբ բավարար*
ՎԵՐՋՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ՝	*մասամբ բավարար*

Փորձագիտական խմբի ղեկավարը և համակարգողը հայտարարում են, որ այս զեկույցը կազմված է խմբի անդամների հաշվետվությունների հիման վրա: Խումբը ուսումնասիրել է զեկույցը և համաձայն է նրանում բերված գնահատականների հետ: Խմբի անդամները հավաստում են, որ գնահատումն իրականացվել է փորձագետների անկախության սկզբունքի պահանջների համաձայն:

15.04.2013թ.

պրոֆ. **Մարինկա Բաղդասարյան** դոց. **Անուշավան Մակարյան**

ՓՈՐՁՆԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻՈՆԱԼ, ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

Ի.ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ.

1.1. Իր գործունեության ռազմավարական պլանավորումը Հայաստանի պետական ագրարային համալսարանը սկսել է 2007-2011թ. Ռազմավարական հայեցակարգի մշակումով, որտեղ առաջին անգամ ձևակերպվել է նրա առաքելությունը, ռազմավարական զարգացման ուղղություններն իրենց նպատակներով և խնդիրներով: 2011 թ.-ին ՀԱԱՀ գիտական խորհուրդը հաստատել է նոր՝ «ՀԱԱՀ 2010-2015թ. և մինչև 2025թ. Հեռանկարային զարգացման ռազմավարական հայեցակարգ»-ը, որտեղ համալսարանը իր առաքելության իրականացման կարևորագույն երեք գործունեության ոլորտներ է համարում կրթականը, գիտականը և խորհրդատվականը: Ստորաբաժանումների ղեկավարների հետ հանդիպումները ցույց տվեցին, որ ոլորտների կառավարիչները տեղյակ են հաստատության առաքելությունից բխող իրենց գործունեության հիմնական ոլորտների նպատակներին ու խնդիրներին:

Համալսարանը իրականացնում է միջին մասնագիտական, բակալավրական և մագիստրոսական կրթական ծրագրեր, որոնց շրջանավարտներին տրվող որակավորումները համապատասխանում են «ՀՀ կրթության որակավորումները և դրանց ընդհանրական բնութագրերը» փաստաթղթով (ՈԱԾ) նկարագրված 5-րդ, 6-րդ և 7-րդ մակարդակներին: Փորձագիտական այցի ժամանակ կրթության կառավարիչները նշեցին, որ այդ ոլորտում համալսարանը կարևորում է ուսուցման որակի և արդյունավետության բարձրացումը, միջազգային չափանիշներին համապատասխանող կրթական ծրագրերի իրականացումը:

Համալսարանը 2012թ-ին մշակել է հնգամյա զարգացման նոր ռազմավարական պլան: Համալսարանի ղեկավարությունը դա բացատրում է Բոլոնյայի գործընթացների խորացման, միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքների կիրառման և ուսանողակենտրոն մոտեցմամբ կրթություն տրամադրելու անհրաժեշտությունից ելնելով: Կոնկրետացել և հստակեցվել է նաև համալսարանի առաքելությունը. համալսարանը շարունակելու է ձգտել **«որակյալ կրթություն ապահովելու միջոցով Հայաստանում և տարածաշրջանում դառնալ ագրարային ոլորտի աշխատաշուկայի ժամանակակից պահանջները բավարարող և դրանց դինամիկ փոփոխությունները հաշվի առնող առաջատար կրթական, գիտահետազոտական և խորհրդատվական ծառայություններ մատուցող կենտրոն»**: Նոր ձևակերպված առաքելությունը և ռազմավարական ծրագիրն իրականացնելու համար համալսարանը մշակել է համապատասխան պլան և իրականացման ժամանակացույց՝ կոնկրետ ժամկետներով և պատասխանատուներով: Այս նոր փաստաթղթերը ներկայացվեցին փորձագիտական խմբին՝ այցի ժամանակ:

1.2. Իր առաքելությունը, նպատակները և խնդիրները ձևակերպելիս ՀԱԱՀ-ը նախատեսում է հաշվի առնել ներքին /ուսանողներ, պրոֆեսորադասախոսական անձնակազմ/ և արտաքին շահակիցների /գործատուներ, միջազգային կառույցներ/ կարիքները, սակայն դրանց արտացոլումը հիմնավորող փաստերը սակավ են՝ մանավանդ արտաքին շահակիցների մասով: Իրականացված գործողությունները միայն միջնորդավորված կերպով են վեր հանում շահակիցների կարիքները: Ավելին, այդ հարցումները չունեն պարբերական բնույթ, այլ նախաձեռնվել և իրականացվել են արտաքին գործոնների ազդեցությամբ:

ՀԱԱՀ-ում նախատեսվում է ստեղծել մասնագիտական կրթական ծրագրերի գնահատման հարցաթերթ, որն ուղղված է լինելու շրջանավարտներին, գործատուներին և համալսարանի նախորդ տարիների շրջանավարտ աշխատակիցներին: Դրանով փորձ է արվելու ստանալ արձագանք կրթական ծրագրերի որակի վերաբերյալ և ձևավորել հակադարձ կապի մեխանիզմ կրթական նպատակների և խնդիրների բարելավման համար:

1.3. ՀՊԱՀ-ի յուրաքանչյուր ստորաբաժանում ռազմավարական հայեցակարգի նպատակների և խնդիրների իրականացումը կատարում է իր մասով, ընդգրկելով այն իր տարեկան պլանավորման մեջ, իսկ իրականացման արդյունքները ցույց են տրվում տարեկան հաշվետվություններում: Ընդունված հաշվետվողականության համակարգը ներքևից վերև է ուղղված. ամբիոններից ֆակուլտետներ կամ բաժիններից վարչություններ և ապա համապատասխան պրոռեկտորներին:

Բուհի 2007-2011թ. Ռազմավարական հայեցակարգով պլանավորված էր ռազմավարական նպատակների և խնդիրների իրականացումը և դրանց արդյունավետությունը գնահատել Գնահատման առանցքային ցուցիչների միջոցով, սակայն համալսարանի կողմից ըստ ցուցիչների տվյալների հավաքում, դրանց վերլուծություն և գնահատումներ չեն իրականացվել, որոնց հիման վրա տեղի էր ունեցել ռազմավարական ծրագրի փոփոխությանը:

Ռազմավարական զարգացման նոր հայեցակարգով արդյունքների գնահատման համար նախատեսվում են կիրառել մի շարք նոր ցուցիչներ համալսարանի զարգացման ռազմավարական պլանի, կրթական ոլորտի զարգացման պլանի, կրթական ծրագրերի և այլ գործընթացների գնահատման համար:

ԴԱՍՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՀԱԱՀ հեռանկարային զարգացման ռազմավարական հայեցակարգը նախկին նմանատիպ փաստաթղթի բարելավված տարբերակն է, որտեղ ուրվագծված է համալսարանի ողջ գործունեությունը: Այստեղ ավելի հստակ է ձևակերպված համալսարանի առաքելությունը, այդ առաքելությունից բխող ռազմավարական նպատակը: Նոր հայեցակարգում նույնն են մնացել համալսարանի կողմից կարևորվող գործունեության ուղղությունները, սակայն դրանց համար արդեն մշակվել են զարգացման առանձին ռազմավարական ծրագրեր, դրվել են նոր խնդիրներ: Ռազմավարական պլանին հետևելը և ժամանակացույցի հստակ պահպանումը, անհրաժեշտ միջոցների տրամադրումը և պատշաճ վերահսկողության իրականացումը բուհին թույլ կտան լուծել նախատեսված խնդիրները:

ՀԱԱՀ-ը տարբեր ուսումնասիրությունների միջոցով փորձում է վերհանել, քննարկել ու վերլուծել տարբեր շահակիցների կարիքները, սակայն կանոնակարգված և ներդրված հստակ մեխանիզմների բացակայությունը թույլ չեն տալիս դա իրականացնել արդյունավետորեն:

Համալսարանի կառավարիչները կարևորում են ռազմավարական ծրագրի համապատասխանությունը ներքին և արտաքին իրավիճակին, շուկայի պայմաններին, սակայն ծրագրի հաճախակի փոփոխությունները կարող են լինել շտապողականության հետևանք և պարունակել ռիսկեր ոչ բավարար հիմնավորված որոշումների կայացման առումով: Ռեկտորի տարեկան հաշվետվությունները չպետք է լինեն ռազմավարական պլանի իրականացման արդյունքների գնահատման միակ մեխանիզմը: Հին ծրագրի արդյունքների գնահատման, դրանց վերլուծության վերաբերյալ նյութերի սակավությունը, կատարողականի ցուցիչների վերաբերյալ տվյալների հավաքագրման ընթացակարգերի բացայությունը թույլ են տալիս ենթադրել, որ նախկին ռազմավարական հայեցակարգի և ծրագրի փոփոխությունների վերաբերյալ որոշումները կայացվել են ոչ բավարար հիմնավորվածությամբ և համալսարանի կարիքների վերհանումով:

Համալսարանը տեղյակ է առաքելության և նպատակների ձեռքբերումների գնահատման մեխանիզմների մշակման անհրաժեշտության մասին և ընդունում է այն: Համալսարանի գործող առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման մեխանիզմները և ընթացակարգերը մեծամասամբ մշակված են: Ներկայումս գնահատման գործընթացը հիմանականում չի իրականացվում բուհի կողմից սահմանված գործիքների միջոցով և կանոնակարգված ձևով, սակայն համակարգված է տարբեր խորհուրդների մակարդակներում: Որոշակի տեղեկատվություն (հարցումների և կարիքների վերհանման արդյունքներ՝ մեծամասամբ ինքնավերլուծության գործընթացի առնչությամբ) է հավաքագրվում գործունեության տարբեր ոլորտների վերաբերյալ և տարբեր ստորաբաժանումներից: Սակայն տեղեկատվության համակարգված վերլուծություն չի իրականացվում, և ոչ կանոնավոր կերպով է օգտագործվում որոշումների կայացման գործընթացում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. ՀԱԱՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը **ՉԱՓԱՆԻՇ 1**-ի պահանջներին **մասամբ է բավարար:**

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ. Անհրաժեշտ է.

- մշակել մեխանիզմներ, որոնք կապահովեն ներքին և արտաքին շահակիցների կարիքների արտացոլումը համալսարանի առաքելության, նպատակների և խնդիրների մեջ;
- համալսարանի առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման ընթացակարգերին համապատասխան մշակել կատարողականի ցուցիչները,
- Ռազմավարական հայեցակարգով նախատեսված առանձին Ռազմավարական ծրագրերի համար մշակել մշտադիտարկման ցուցիչներ՝
    - ✓ գործընթացի իրականացման ցուցիչներ (քանակական ցուցիչներ) ըստ խնդիրների,
    - ✓ գործընթացի որակի ցուցիչներ (ըստ առանձին գործընթացների),
- մշտադիտարկման և կատարողականի ցուցիչների վերաբերյալ մշակել տվյալների հավաքման ընթացակարգեր,

- կանոնակարգել մշտադիտարկման և կատարողականի ցուցիչների վերաբերյալ տվյալների աղբյուրները, տվյալների հավաքումը, վերլուծությունների իրականացումը և վերլուծության արդյունքների կիրառման մեխանիզմները,
- մշակել մեխանիզմներ, որոնք կապահովեն համալսարանի առաքելության և նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների մասնակցությունը:

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործունեությունը արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ.

2.1.Համալսարանը, կարևորելով իր կառավարման համակարգի հետագա կատարելագործումը, 2011 թ.-ին իրականացրել է կառուցվածքային փոփոխություններ՝ հաստատելով նոր կառուցվածք և ստեղծելով կառուցվածքային նոր ստորաբաժանումներ, իրականացվել է պրոռեկտորների պարտականությունների վերաբաշխում և այլն:
Ըստ ինքնավերլուծության՝ ՀԱԱՀ-ի իրականացրած կառուցվածքային փոփոխությունները միտված են կրթության որակի ապահովման գործընթացների բարելավմանը և դրանց վերահսկման մեխանիզմների ստեղծմանը: Սակայն առայժմ վաղ է խոսել այդ փոփոխությունների դրական ազդեցության մասին:

Համալսարանում բացակայություն են ֆինանսների տնօրինման քաղաքականությունը և ընթացակարգերը՝ որպես առանձին ձևակերպված փաստաթղթեր, ինչպես նաև իրականացված ֆինանսական աուդիտի աուդիտի արդյունքներ և դրանց վերլուծություններ:

ՀԱԱՀ-ը 2012թ-ին վերանայել է բուհի կառավարման համակարգը ապահովող որոշումներ կայացնելու գործընթացը և ուսումնասիրել է կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներով հաստատության ապահովվածության հարցերը: Այդ առումով, համալսարանում մշակվել են «Ներքին աուդիտի» և «Անհամապատասխանությունների կառավարման» ընթացակարգեր, որոնք միտված են կրթական միջավայրի բարելավմանը:

2.2. ՀԱԱՀ-ը գործող կանոնադրության ու կանոնակարգերի կիրառման միջոցով փորձում է ներքին շահակիցներին՝ դասախոսներին և ուսանողներին անմիջականորեն մասնակից դարձնել տարբեր մակարդակների կառավարման կառույցների աշխատանքներում՝ նրանց ներգրավելով կառավարման տարբեր օղակներում և թափանցիկ դարձնելով բուհում ընթացող գործընթացները: Մասնավորապես, դասախոսները և ուսանողներն ընդգրկված են բուհի տարբեր կառավարման մարմիններում՝ ՀԱԱՀ կառավարման խորհրդում, Գիտական խորհրդում, ֆակուլտետների գիտական խորհուրդներում:

Փորձագիտական այցի ընթացքում տեղի ունեցած հանիպումների ժամանակ մասնակիցները հիմնականում տեղյակ էին, որ կառավարման համակարգի բոլոր օղակներում ընդգրկված են դասախոսներ և ուսանողներ, որը նրանց հնարավորություն է

տալիս մասնակցել բուհի կառավարման գործընթացներին: Մյուս կողմից էլ նրանք դժվարանում էին ներկայացնել կոնկրետ փաստեր և օրինակներ, որոնք ցույց տային, թե որքանով են դասախոսներն ու ուսանողները մասնակցում իրենց առնչվող որոշումների կայացմանը:

2.3. ՀԱԱՀ-ը իր կողմից մշակած 2012-2017թթ. զարգացման ռազմավարական պլանի միջոցով փորձում է իրականացնել իր առաքելությամբ սահմանված նպատակները, իսկ կարճաժամկետ և միջնաժամկետ պլաններով՝ լուծել կոնկրետ խնդիրներ: Մասնավորապես, պլանավորվում է ռեկտորատի, գիտխորհրդի, ուսումնամեթոդական կենտրոնի, գիտական կենտրոնի և այլ ստորաբաժանումների տարեկան գործունեությունը, ստեղծվում են աշխատանքային պլաններ՝ հիմք ընդունելով ՌՊ-ում նշված խնդիրները:

Վերանայվել և լրամշակվել է համալսարանի գործընթացների պլանավորման հիմնական ծրագրային փաստաթուղթը՝ ՀԱԱՀ մինչև 2025 թ. հեռանկարային զարգացման ռազմավարական հայեցակարգը, դրա հիման վրա ստեղծվել է նոր փաստաթուղթ՝ "ՀԱԱՀ 2012-2017 ռազմավարական պլան", որում առկա են թե գործողությունների ժամանակացույցը, թե պատասխանատուները, ինչպես նաև հաշվի են առնված ինստիտուցիոնալ ինքնավերլուծության ընթացքում բացահայտված որոշ բացթողումներ:

Սակայն, պլանավորման առումով համալսարանում դեռևս բացակայում է համակարգված մոտեցումը: Մասնավորապես, կանոնակարգված չէ «ներքևից վերև» և «վերևից ներքև» պլանավորման գործընթացների համակցումը, դեռևս մշակված չեն կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորումների մշտադիտարկման և արդյունավետության գնահատման մեխանիզմները:

Փորձագիտական այցի ընթացքում տեղի ունեցած դիտարկումների արդյունքում պարզվեց, որ դեկանատների աշխատանքային պլաններն առկա են միայն ՀԱԱՀ որոշ ֆակուլտետներում: Դեկանատների աշխատանքների պլանավորումը ընթացակարգված չէ. չնայած առանձին ֆակուլտետների դեկանատների կողմից կատարվել են իրենց աշխատանքների տարեկան պլանավորում՝ դեկանների անձնական նախաձեռնությամբ:

2.4. Համալսարանը, ելնելով նրանից, որ կրթական բարեփոխումների գործընթացը պետք է համահունչ լինի Բոլոնիայի հռչակագրին և Եվրոպական բարձրագույն կրթական տարածք ինտեգրվելու հետ, փորձել է իր վրա ազդող գործոնները ուսումնասիրել և որոշումներ կայացնել հիմնականում այդ տեսանկյունից: Երկրորդ ուղղությունը, որը կրում է եզակի բնույթ, եղել է հանրակրթական 12-ամյա դպրոցների շրջանավարտների 2011թ-ի բացակայության պայմաններում կադրային ոլորտում միջոցառումների պլանավորումն ու իրականացումը: Համալսարանն իր գործունեության վրա ազդող գործոնների վերլուծությունը կատարվել է հարցազրույցների, գրականության և փաստաթղթերի ուսումնասիրություններից ստացված տվյալների հիման վրա:

2.5. Հարկ է նշել, որ Համալսարանում վարչարարություն իրականացնելու քաղաքականությունները, ընթացակարգերը և մեխանիզմների նկարագրությունները որպես առանձին նոմատիվային փաստաթղթեր հիմնականում բացակայում են: Սակայն դրանց մեծ մասը ներառված են տարբեր կանոնակարգերում, իսկ պլանավորումը կատարվում է համապատասխան կառույցի կամ ստորաբաժանման կողմից: Պլանավորման ժամանակ նշվում են պատասխանատուները, գործողություններն ու ժամկետները: Նշված ժամկետներում կատարված գործի մասին պատասխանատուները ներկայացնում են

հաշվետվություններ, որոնք լսվելուց հետո հաստատվում են այդ կառույցի կամ ստորաբաժանման կողմից: Առկա են

Քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարության իրականացման արդյունավետությունը գնահատող որոշակի սկզբունքներ, գործիքներ, որպես այդպիսին, մշակված չեն: Բացառություն է կազմում ինքնավերլուծության մեջ ներկայացված որակի ապահովման մեխանիզմները և սկզբունքները, որոնց հիմքում ընկած է Դեմինգի մոդելը (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում):

2.6. ՀԱԱՀ-ը, կարևորելով որակի ապահովման գործընթացները, փորձում է մշակել և ներդնել գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, վերլուծության և կիրառման գնահատման մեխանիզմներ: Համալսարանում իրականացվող հիմնական գործընթացները գնահատվում են հաշվետվության ձևաչափով, իսկ անհրաժեշտ տեղեկությունները հավաքվում են ներքևից վերև սկզբունքով: Այնուհետև, նախկինում ունեցած տվյալների կամ սպասվող արդյունքների հիման վրա պատասխանատուները կատարում են համեմատական վերլուծություններ՝ փորձելով գնահատել գործընթացի արդյունավետությունը: Սակայն, մինչ այժմ էլ ՀԱԱՀ-ում, առանձին բացառություններով, բացակայում են մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետությունը գնահատող կանոնակարգված գործուն մեխանիզմները:

2.7. ՀԱԱՀ-ը փորձում է կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին քանակական և որակական տեղեկատվության հրապարակումների գնահատման Ազրոբիզնեսի ուսուցման դեպարտամենտի դրական փորձը տարածել իր մյուս ստորաբաժանումներում, որտեղ նմանատիպ մեխանիզմները բացակայում են: Բացակայում են նաև հրապարակային տեղեկատվության տարածման քաղաքականությունը և ընթացակարգերը, հրապարակումների մատչելիությունը և օբյեկտիվությունը գնահատող մեխանիզմները: Սակայն ուսումնական հաստատության կառավարումը, կրթական և հետազոտական գործունեությունը և հասարակությանը մատուցվող ծառայությունները աստիճանաբար բարելավվում են և միտված են հասարակության առջև հաշվետվողականության ապահովմանը:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Համալսարանի կառավարման համակարգն անցյալում ծառայել է իր նպատակին: Սակայն ներկայումս այն ներքին և արտաքին նոր մարտահրավերների առջև է կանգնած, որոնք պահանջում են հստակ և հաշվետվողական որոշումների կայացման գործընթացներ, շատ ռեսուրսներ և լավ տեղեկատվական համակարգ: Քանի դեռ համալսարանը այս փոփոխությունների իրականացման գործընթացում է, այն պետք է համապատասխան ջանքեր և ժամանակ տրամադրի մոտ ապագայում իր կառավարման համակարգը բարելավելու և կառավարիչների կարողությունները մեծացնելու համար: Կառվարման նոր համակարգի արդյունավետության մասին համալսարանը կարող է դատել որակի կառավարման սկզբունքով իրականացված գործընթացների մեկ շրջափուլի արդյունքների վերլուծությունից հետո միայն:

Ֆինանսների տնօրինման քաղաքականության և ընթացակարգերի առկայությունը շահակիցներին ցույց կտար համալսարանի գերակայությունները և զարգացման հիմնական ուղղությունները, կնպաստեր հստակ պլանավորմանը և գործունեության թափանցիկության աճին: Անկախ ֆինանսական աուդիտների իրականացումն ու դրանց արդյունքների վերլուծությունները թույլ կտան եզրակացություններ անել ներդրումների

նպատակայնության և արդյունավետության մասին, կիանդիսանային հաշվետվողականության առանձին մեխանիզմ:

Համալսարանի տարբեր կառավարման մարմիններում դասախոսների և ուսանողների ընդգրկվածության կանոնակարգումը հնարավորություն է ապահովում մասնակցել իրենց առնչվող որոշումների կայացմանը, սակայն նրանց փաստացի պասսիվությունը չի նպաստում որակի մշակույթի ձևավորմանը և ուսանողակենտրոն ուսուցման զարգացմանը բուհում:

Միաժամանակ հարկ է նշել, որ միայն ուղղակի հաշվետվությունների կիրառումը որպես մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծությունը և կիրառումը գնահատող մեխանիզմ, չեն կարող լիարժեք նպաստել այդ տեղեկատվության նպատակային կիրառմանը:

Իր գործունեության վրա ազդող գործոնների ոչ համալիր ուսումնասիրությունը, այդ գործոնների ուսումնասիրության համար կիրառվող կանոնակարգված մեխանիզմների և գործիքների բացակայությունը, ինչպես նաև որոշումներ կայացնելիս ոչ ամբողջական և հավաստի տվյալների վրա հիմնվելը վտանգի տակ կարող է դնել բուհի ռազմավարական նպատակների իրականացումը և աշխատաշուկայի հարափոփոխ պահանջներին համապատասխան կրթական միջավայրի ստեղծումը:

Քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարության ոլորտում որակի կառավարման սկզբունքի մասնակի կիրառումը ցուցադրում է համալսարանում որակի մշակույթի բարելավման անհրաժեշտությունը:

Հրապարակային տեղեկատվության տարածման քաղաքականության և ընթացակարգերի, ինչպես նաև հրապարակումների մատչելիությունը և օբյեկտիվությունը գնահատող մեխանիզմների բացակայությունը թույլ չի տալիս ապահովել անհրաժեշտ հաշվետվողականություն հասարակության առջև, մրցունակության ցուցադրում և ուսումնական հաստատության կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ թափանցիկություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. ՀԱԱՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը **ՉԱՓԱՆԻՇ 2**-ի պահանջներին ***մասամբ է բավարար:***

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ. Անհրաժեշտ է.

- համալսարանի համար սահմանել էթիկայի կանոններ,
- մշակել կանոնակարգեր, մեխանիզմներ և գործիքներ համալսարանի քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարությունն որակի կառավարման սկզբունքով իրականացնելու և գնահատելու համար,
- համալսարանի համար մշակել ֆինանսների տնօրինման առանձին քաղաքականություն և ընթացակարգեր,
- մշակել մասնագիտությունների կրթական ծրագրերի և համալսարանում իրականացվող գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, վերլուծության և կիրառումը գնահատող մեխանիզմներ,

- կանոնակարգել համալսարանի գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրության գործընթացը, ստեղծել այդ գործոնների ուսումնասիրության մեխանիզմներ և գործիքներ,
- մշակել համալսարանը հրապարակային տեղեկատվության տարածման քաղաքականություն և ընթացակարգ,
- կանոնակարգել հրապարակման ենթակա կամ արգելվող, ինչպես նաև ներքին օգտագործման համար (կոնֆիդենցիալ) տեղեկատվությունների տրամադրումը:

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-երը համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ.

3.1. ՀԱԱՀ-ի ՄԿԾ-ների բաղադրիչները՝ ուսումնական պլանները և առարկայական ծրագրերը, կազմված են բարձրագույն մասնագիտական կրթության պետական չափորոշիչների հիման վրա, համահունչ են ՀՀ գերատեսչական նորմատիվային ակտերի ազգային ոլորտի ՄԿԾ-ների չափորոշիչներին: Համալսարանի ՄԿԾ-ները համապատասխանում են ՀՀ ՈԱՇ-ին, սակայն ՄԿԾ-ների մեջ ներառվող առարկայական ծրագրերը մասամբ են նկարագրված ըստ ՈԱՇ-ի կողմից դրվող պահանջների (գիտելիք, հմտություն, կարողություն): Համալսարանում ուսումնական պլանների վերանայման գործընթացը պարտադրված բնույթ է կրել՝ դա մասնավորապես պայմանավորված է եղել նախ՝ դիպլոմավորված մասնագետի ԿԾ-ից բակալավրի ԿԾ-ին անցումով, այնուհետև՝ 4 տարվա ուսուցման ծրագրից 4 տարի 8 ամսյա ծրագրով ուսումնական գործընթացի կազմակերպումով: Իսկ դասընթացների ծրագրերը բուհի կողմից վերանայվել են ըստ անհրաժեշտության:

ՀԱԱՀ-ում դեռևս ՄԿԾ-նեի նպատակները, խնդիրները և ակնկալվող ուսումնառության արդյունքները հստակորեն ձևակերպված չեն, սակայն Համալսարանը ձեռնամուխ է եղել ՄԿԾ-ների մշակման, հաստատման, վերանայման քաղաքականության և ընթացակարգերի վերաբերյալ փաստաթղթերի մշակման աշխատանքներին:

3.2. ՀԱԱՀ-ում ՄԿԾ-երի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն որպես այդպիսին բացակայում է:

3.3. Համալսարանում ուսանողների գիտելիքների ստուգումը և գնահատումը կատարվում է ըստ գիտելիքների գնահատման կանոնակարգի: ՀԱԱՀ-ն ունի գիտելիքների ստուգման և գնահատման մեթոդաբանություն, որի հիմքում ընկած է գիտելիքների գնահատման բազմագործոնային համակարգը:

Միաժամանակ, համալսարանում գնահատականների բողոքարկումներ կատարվում են, սակայն գործընթացը կանոնակարգված չէ. գիտելիքների ստուգման և գնահատման կարգում բողոքարկման ընթացակարգը ամրագրված չէ: ՈՒսանողները բավարարված են, որ դասախոսի հետ քննարկման արդյունքում կարող են նոր գնահատական ստանալ կամ փոխել հինը, սակայն բողոքարկման կարգի վերաբերյալ տեղեկություն չունեն:

Ակադեմիական ազնվության ապահովելու նպատակով համալսարանում քննությունները կազմակերպվում և անց են կացվում հանձնաժողովներով՝ կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների կողմից վեահսկողության պայմաններում:

3.4. Բոլոնյայի հռչակագրի պահանջներին և ՀՀ կառավարության բարձրագույն կրթական համակարգի բարեփոխումներին նվիրված որոշումներին համահունչ ՀԱԱՀ-ում կատարվել են ուսումնական պլանների բովանդակային վերափոխումներ և առարկայական ծրագրերի լրամշակումներ: Հիմնական գործընթացները նպատակաուղղված են եղել ապահովելու բարձրագույն կրթության երկաստիճանի համակարգի ձևավորմանը նպաստող կրթական ծրագրերի մշակմանը: Դա որոշակիորեն նպաստել է ՀԱԱՀ ուսանողների և դասախոսների շարժունությանը:

Համալսարանում կատարվում են որոշակի գործընթացներ, որոնք միտված են ուսանողների և դասախոսների շարժունակության ապահովմանը, սակայն դա բացառապես իրականացվում է միջազգային ծրագրերի շրջանակներում, իսկ համալսարանի կողմից դասախոսների և ուսանողների փոխանակման կարգավորված գործընթաց չի իրականացվում:

Համալսարանի առանձին ՄԿԾ-ի բովանդակային համապատասխանությունը դիտարկվել է ՀՀ այլ բուհերի հետ և ոչ ազգարային ոլորտի մասնագետներ պատրաստող այլ ճանաչված համալսարանների մասնագիտությունների կրթական ծրագրերի հետ:

3.5. Մասնագիտությունների կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականության բացակայության պայմաններում ՀԱԱՀ-ը փորձում է այլ մեխանիզմների և գործիքների օգնությամբ իրականացնել կրթական ծրագրերի մշտադիտարկում՝ պլանավորելով գնահատել ուսումնական գործընթացի արդյունավետությունը և բարելավել այն: Այդ նպատակով, ՀԱԱՀ-ի մեթոդ. խորհրդի կանոնակարգին համապատասխան, ֆակուլտետի մեթոդ. խորհուրդը ուսումնասիրում և քննարկում է ուսումնական պլանները և դասընթացների ծրագրերը, որից հետո դրանք ներկայացվում են համալսարանի մեթոդ խորհուրդ: ՀԱԱՀ-ի մեթոդ. խորհուրդը քննարկում է ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի կատարման և բարելավման առաջարկությունները, որից հետո դրանք ներկայացվում են գիտական խորհուրդի քննարկմանը:

Համալսարանում առկա են ՄԿԾ-երի (ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի) մշտադիտարկման և բարելավման գործընթացների անաչառությունը երաշխավորող հետևյալ մեխանիզմները՝ պետական քննական և դիպլոմային պաշտպանության հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները, աշխատանքի տեղավորման և խորհրդատվության բաժնի կողմից ստացված արձագանքները, ուսումնական և արտադրական պրակտիկաների կազմակերպման և իրականացման բաժնի կողմից ստացած արձագանքները, ուսանողների արտադրական պրակտիկայի հաշվետվությունների ուսումնասիրությունը:

ԴԱՍՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՀԱԱՀ-ի կրթական ծրագրերի գերակշռող մասը դեռևս չի վերանայվել մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքների տեսանկյունից, ինչը թույլ չի տալիս գնահատել, թե առկա դասավանդման և ուսումնառության մեթոդները որքանով են նպաստում ուսանողակենտրոն ուսուցմանը և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան ուսումնառողների գիտելիքների, հմտությունների, կարողությունների ձևավորմանը:

ՈՒսումնառության ակնկալվող արդյունքների բացակայության պայմաններում գնահատման քաղաքականությունը, մեթոդներն ու չափանիշներն էլ ուղղված չեն դեպի այդ արդյունքները, ուստի չեն կարող ապահովել օբյեկտիվ գնահատում և ակադեմիական ազնվություն: Քննությունների հանձնաժողովների կողմից կազմակերպումը կարող է ակադեմիական ազնվությունը ապահովող մեխանիզմի տարր հանդիսանալ, բայց ոչ համակարգ, իսկ դասախոսի հետ բանավոր քննարկման արդյունքում գնահատական ստանալու կամ հինը փոխելու պրակտիկան, որ գործում է բուհում, չի կարող նպաստել ակադեմիական ազնվությանը, և գնահատականի բողոքարկման հարմար տարբերակ չէ:

Արտաքին գործոններով պայմանավորված ուսումնական պլանների փոփոխումները և դասընթացների ծրագրերի լրամշակումները, այլ ոչ բովանդակային առումով համահունչության ապահովումը նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերի հետ, փոքր չափով կարող են նպաստել ուսանողների և դասավանդողների շարժունությանը և բուհի գործունեության միջազգայնացմանը:

ՄԿԾ-ների պարբերաբար մշտադիտարկման, արդյունավետության գնահատման և բարելավման քաղաքականության բացակայության պայմաններում այդ գործընթացները իրականացվում են ՀԱԱՀ-ի մեթոդ. խորհրդի կանոնակարգին և ֆակուլտետային ու Համալսարանական ուսումնամեթոդական խորհրդի աշխատանքային պլաններին համապատասխան: Սակայն առայժմ ցածր է ուսանողների, շրջանավարտների և գործատուների մասնակցությունը: Համալսարանում վերջին տարիներին վերանայվել են կրթական ծրագրերի մեծ մասը, սակայն առանց շահակիցների կարիքների վերհանման, մասնագիտական և տեխնոլոգիական առաջընթացի հաշվառման, ինչը միտված չէ այնպիսի կրթական միջավայրի ստեղծմանը, որը կնպաստի աշխատաշուկայի պահանջների բավարարմանը և մասնագիտական կրթության արդյունավետության բարձրացմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. ՀԱԱՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 3-ի պահանջներին ***մասամբ է բավարար:***

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ. Անհրաժեշտ է.

- ՄԿԾ-ների խոշորացում և պարբերական վերանայում,
- յուրաքանչյուր ՄԿԾ-ի համար մշակել շահակիցների պահանջները հաշվի առնող ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխանող դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն և դրանց իրականացման մեխանիզմներ,
- մշակել ըստ ուսումնառության արդյունքների ուսանողների գնահատման քաղաքականության և ակադեմիական ազնվության ապահովման մեխանիզմները, ինչպես նաև կանոնակարգել գնահատման բողոքարկման գործընթացը,
- քայլեր ձեռնարկել ուսումնական պլանների և դասընթացների ծրագրերի՝ նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերի հետ նպատակային բենչմարկինգի և բովանդակային համահունչության ապահովման ուղղությամբ,
- մշակել կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն և իրականացման մեխանիզմներ:

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ.

4.1. ՀԱԱՀ-ի ռազմավարական առաջնային նպատակներից է համալսարանի ընդունելության համակարգի կատարելագործումը, ուսումնական համակազմի ընդլայնմանն ուղղված դիմորդների կայուն հոսքի ապահովումը: Վերջինիս նպատակով ՀԱԱՀ-ը իր ողջ ներուժը ուղղորդում է ավագ դպրոցների բարձր դասարանների աշակերտների մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ տարվող աշխատանքների ընդլայնմանը:

Ավագ դպրոցների բարձր դասարանների և քոլեջների ուսումնառողների մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ տարվող աշխատանքները կազմակերպում է «Շարունակական ուսուցման բաժին»-ը: Մասնագիտական կողմնորոշումն իրականացվում է բուհի դասախոսական կազմի հանրապետության մարզեր և շրջաններ այցելությունների, գովազդային տեղեկատվական նյութերի, ՀԱԱՀ «ՀԱՍԿ» պաշտոնաթերթի հատուկ համարի և տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով (ՏԻՄ):

Ինքնուրույն ընդունելություն և ընտրություն համալսարանն իրականացնում է բակալավրատի հեռակա ուսուցման համակարգում և մագիստրատուրայում՝ առաջնորդվելով ՀՀ ԿԳՆ-ի կողմից հաստատված նորմատիվային փաստաթղթերով:

4.2. ՀԱԱՀ-ում ուսանողների կրթական կարիքների վերհանման քաղաքականությունը բացակայում է, սակայն իրականացվում են որոշ գործընթացներ: Այդ բացը լրացնելու համար Համալսարանը պլանավորում է մասնագիտության (խմբի) խորհրդատու (խնամակալ) դասախոսների (մասնագիտության համակարգող) ինստիտուտի կատարելագործման միջոցով վերհանել ուսանողների կրթական կարիքները և բավարարել դրանք:

ՈՒսանողների կրթական կարիքների վերհանման նպատակով իրականացվում են պարբերական հանդիպումներ դեկանների և ռեկտորի հետ, մասնագիտության համակարգողի կողմից ուսանողների ուսումնական աշխատանքների բարելավմանը միտված համալիր աշխատանքներ, սոցիոլոգիական հարցումներ:

Ուսանողների կրթական կարիքների ապահովման նպատակով որոշում է կայացվել մասնագիտության համակարգողի կանոնակարգը լրամշակել ըստ նոր պահանջների, մասնագիտության համակարգողի գործունեությունը տարածել համալսարանի ուսուցման բոլոր ձևերի և կրթական աստիճանների վրա:

4.3. ՀԱԱՀ-ն իր ռազմավարական խնդիրներից է համարում ուսումնական գործընթացում և դրանից դուրս ուսանողների ու դասախոսների համագործակցության, խորհրդատվության մատչելիության, թափանցիկության ապահովման ձևերի և մեթոդների բարելավումը, գիտելիքների ձեռք բերման նկատմամբ ուսանողների շահագրգռվածության և ուսումնառությունից ուսանողի բավարարվածության մակարդակի բարձրացումը, որում, ըստ ՀԱԱՀ-ի կանոնադրության, Համալսարանի կոլեկտիվը պարտավոր է մասնակցել խորհրդատվական աշխատանքներ կատարելու մասով:

Համալսարանում գործում է հարգելի բացակայությունների լրացման կարգ, որի համաձայն ամբիոնները կազմակերպում են լրացուցիչ պարապմունքներ: ՈՒսանողներին խորհրդատվություններ տրվում են բոլոր առարկաների ուղղություններով, մասնավորապես

միջանկյալ, վերջնական, պետական քննությունների հանձման ժամանակահատվածում, որը կարգավորվում է ՀՊԱՀ-ի ուսանողների հաճախումների հաշվառման և անհատական պարապմունքների կազմակերպման կանոնակարգով: Ամբիոններում գործում է ուսանողների հետ լրացուցիչ պարապմունքների անցկացման ժամանակացույց՝ խորհրդատվությունների ժամանակացույց, որը հաստատվում է ամբիոնների վարիչների կողմից, փակցվում ամբիոնի հարակից միջանցքում:

Համալսարանը նպատակային չի ուսումնասիրել խորհրդատվական ծառայությունների մասին ուսանողների տեղեկացվածության, ընդգրկվածության և բավարարվածության մասին, սակայն հանդիպումներին մասնակցած ուսանողների մեծամասնությունը տեղեկացված և գոհ են այդ ծառայություններից:

4.4. ՀԱԱՀ-ն վարչական անձնակազմին դիմելու գործընթացը կանոնակարգված չէ: Սակայն ուսանողները և աշխատակիցները պնդում են, որ ցանկացած պահի կարող են իրենց հուզող հարցերով դիմել պրոռեկտորներին, ֆակուլտետի դեկաններին և առանձին ստորաբաժանումների ղեկավարներին, իսկ Համալսարանի ռեկտորին ուսանողների դիմելու համար սահմանված են ընդունելության օրեր և ժամանակացույց: Համալսարանի վարչական անձնակազմին կարելի է դիմել նաև ՀԱԱՀ-ի պաշտոնական կայք էջում առկա հետադարձ կապի միջոցով:

Ուսումնամեթոդական կենտրոնի ԿԲՌՊՈՎԻ վարչության կողմից անցկացված «Բուհի ռեսուրսների և ծառայությունների որակի գնահատման» հարցումների և փորձագիտական այցի ժամանակ տեղի ունեցած հարդիպումների մասնակիցները բավարարված են վարչական անձնակազմի հասանելիությունից և տրամադրած ծառայությունների արդյունավետությունից:

4.5. ՀԱԱՀ-ը իր ուսանողների և շրջանավարտների շարժունությունը, միջազգայնացումը, կրթությունը շարունակելու և կարիերայի զարգացման հնարավորությունները, շրջանավարտների զբաղվածության և շրջանավարտների հետ կայուն հետադարձ կապերը փորձում է ապահովել Աշխատանքի տեղավորման և խորհրդատվության բաժնի գործառույթների միջոցով:

Առաջնորդվելով իր կանոնակարգով՝ բաժինը ներկայումս համագործակցում է 52 գործատու կազմակերպությունների հետ, անցկացնում է նաև անհատական խորհրդատվություններ ուսանողների հետ. վերջիններս տեղեկացվում են ՀՀ աշխատաշուկայում տիրող իրավիճակի, գործատու կազմակերպությունների պահանջների, թափուր աշխատատեղերի, ինքնակենսագրական փաստաթղթերի, ուղեկից նամակների կազմման, աշխատանքային հարցազրույցների հաջող անցկացման մասին: 2004թ.-ից սկսած բաժինն, ամենամյա պարբերականությամբ, կազմակերպում է աշխատանքային տոնավաճառներ՝ համագործակցելով տեղական և միջազգային տարբեր կազմակերպությունների հետ: Բաժինը պատրաստում է տեղեկագիր թափուր աշխատատեղերի և կրթությունը շարունակելու վերաբերյալ տեղեկատվությամբ, որն ամսական 3-4 անգամ պարբերականությամբ ուղարկվում է կենտրոնի շահառուների էլ. փոստին: Տեղեկագրի էլեկտրոնային տարբերակը տեղադրվում է նաև ՀԱԱՀ պաշտոնական կայքի «Աշխատանք» բաժնում:

Աշխատանքի տեղավորման և խորհրդատվության բաժինը, համագործակցելով ՀԱԱՀ ֆակուլտետների հետ, թարմացնում է ուսանողների տվյալների բազաները՝ նրանց հետ կապ պաշտպանելու և ուսումնառողին խորհրդատվություն մատուցելու համար: Բաժնի կապի

հիմնական միջոցն է Համալսարանի պաշտոնական կայք-էջի «Կարիերայի կենտրոն» հղումը, որի միջոցով ուսանողը կարող է տեղեկանալ կառույցի, վերջինիս կողմից մատուցվող ծառայությունների մասին, ինչպես նաև առկա հետադարձ կապի միջոցով ստանալ անհրաժեշտ տեղեկությունները:

Որպես ուսանողների կարիերային նպաստող ծառայությունների տրամադրման արդյունքների վերլուծության մեխանիզմ համալսարանը դիտարկում է շրջանավարտների զբաղվածության և Կարիերայի կենտրոնի վերաբերյալ հարցումները, սակայն այդ հարցումները թույլ չեն տալիս պարզել, թե շրջանավարտների որ մասն է աշխատանք գտել հենց կենտրոնի միջոցով, այն դեպքում, երբ կենտրոնի գոյության մասին տեղեկացված են հարցվածների շատ փոքր մասը:

4.6. ՀԱԱՀ-ի գիտական գործունեության զարգացման ռազմավարական ուղղություններից է «համալսարանի գործունեությանը համահունչ՝ ազգարային ոլորտի կատարելագործմանն ուղղված գիտական հետազոտություններում ուսանողության լայն ներգրավման ապահովումը»: Համալսարանում գործում է ուսանողական գիտական ընկերություն (ՈԻԳԸ), որը ուսանողների, մագիստրանտների և ասպիրանտների ինքնակառավարման ներկայացուցչական մարմին է: ՈԻԳԸ-ի հիմնական գործունեության մաս է կազմում նաև ամենամյա ուսանողական գիտաժողովների անցկացումը, որը տեղի է ունենում փուլերով՝ ամբիոնային, ֆակուլտետային, համահամալսարանական: Համալսարանը միջոցներ է տրամադրում ՈԻԳԸ-ի գիտական աշխատանքների արդյունքները հոդվածների, արտոնագրերի և թեզիսների ձևով տպագրելու համար: ՈԻԳԸ կանոնակարգի համաձայն ամբիոններին կից գործում են ուսանողական գիտական խմբակներ (ՈԻԳԽ):

Համալսարանում ուսումնառողներին գիտահետազոտական աշխատանքներում ներգրավելու գործընթացը համակարգված բնույթ չի կրում: Բակալավրատի ուսանողների մեծ մասը կամ տեղյակ չեն, կամ ներգրավված չեն որևէ հետազոտական գործունեության մեջ: Մագիստրոսական կրթական ծրագրով ուսումնառողների մի մասն է ընդգրկված հաստատության գիտահետազոտական աշխատանքներում, և հիմնականում այն դեպքերում, երբ նրանց ավարտական աշխատանքի թեման համապատասխանում է ամբիոնի գիտական ուղղվածությանը: Առանձին ուսանողներ ընդգրկվում են նաև համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից իրականացվող միջազգային գիտահետազոտոկան աշխատանքներում:

Ինքնավերլուծությունում՝ որպես ուսանողներին հաստատության գիտահետազոտական աշխատանքներում ներգրավվելու աջակցության գնահատման միջոց ներկայացված են տվյալներ համալսարանական գիտաժողովներին մասնակցած և մրցանակային տեղ գրաված ուսումնառողների մասին, սակայն ավելի խոսուն են ԿԲՌՊՈՎԻ վարչության կողմից ուսանողների շրջանում անցկացված «Ներգրավվածություն գիտահետազոտական աշխատանքներում և դրա արդյունավետությունը» հարցումների արդյունքները. դրանք ցույց են ուսումնառողների կողմից գիտահետազոտական աշխատանքներում ներգրավվածության կարևորումը և ոլորտում առկա խնդիրները:

4.7. ՀԱԱՀ-ում ուսումնառողների իրավունքներով, բողոքներով և բողոքարկումներով զբաղվող առանձին ենթակառույց գոյություն չունի: Համալսարանը ուսանողների իրավունքների պաշտպանությունը փորձում է իրականացնել Ուսանողական խորհրդի (ՈԽ), ինչպես նաև առաջին կուրսեցիներին ուղեցույց տրամադրելու միջոցով, որտեղ ներկայացված են ուսանողի հիմնական իրավունքները և պարտականությունները,

ուսանողների գիտելիքների ստուգման և քննությունների անցկացման կարգը, անհատական պարապմունքների կազմակերպման դրույթները, անվանական կրթաթոշակների և ուսանողական նպաստների տրամադրման կարգը և այլն:

ՈՒսանողները իրենց բողոքներով իրավունք ունեն դիմել կուրսի ուսանողական խորհրդի նախագահին, որը հարցը բարձրացնում է ֆակուլտետի ուսանողական խորհրդի նիստին: Եթե ֆակուլտետային ուսանողական խորհուրդը հարցին չի կարողանում ընթացք տալ, ապա տվյալ հարցը զեկուցվում է Համալսարանի ուսանողական խորհրդի նիստին, որից հետո հարցը խորհրդի նախագահը բարձրացնում է ռեկտորատի նիստին կամ համալսարանի Գիտական խորհրդում:

"ՀԱԱՀ ռեսուրսների և ծառայությունների որակի գնահատման" վերաբերյալ հարցվածների գերակշռող մասը տեղեկացված է ՈՒԽ-ի գործունեության մասին, սակայն ուսանողների կեսը չեն ձգտում օգտվել ՈՒԽ-ի ծառայություններից, իսկ ծառայություններին դիմող ուսանողների 23%-ը խորհրդի արդյունավետությունը գնահատել են բացասական:

ՀԱԱՀ-ի ուսանողները կիսամյակի ընթացքում պարբերաբար հանդիպում են Համալսարանի ռեկտորի հետ, որին մասնակցում է միայն ռեկտորը և ՈՒԽ նախագահը: Հանդիպման ընթացքում բարձրացվում են ուսումնառողներին հուզող հարցերը, արտահայտվում բողոքները, որից հետո բարձրացված հարցերը արձանագրվում և գտնվում են Համասարանի ռեկտորի անմիջական ուշադրության կենտրոնում:

4.8. ՀԱԱՀ-ում տարիների ընթացքում ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատումը իրականացվում է ներքին ստուգումների և ուսումնառողների շրջանում հարցումների ձևով: Որակի վերահսկման և ապահովման աուդիտները (ստուգումներ) իրականացվել և կանոնակարգվել են ՀԱԱՀ որակի վերահսկման և ապահովման մշտական գործող հանձնախմբի ժամանակավոր կանոնակարգով, այդ հանձնախմբի կիսամյակային աշխատանքային պլաններով:

Հանձնախումբի կողմից անցկացվող ստուգումների ժամանակ դասախոսների թիրախային խմբերի մոտ լրացվել են դասալսումների թերթիկներ՝ դասավանդման նյութի, մեթոդների և այլ առումներով, իսկ ստորաբաժանումներում հատուկ կազմված հարցաշարեր՝ գործունեության համապատասխանությունը նորմատիվային փաստաթղթերին ստուգելու նպատակով:

ԿԲՈՊ վարչության որակի վերահսկման և ինքնավերլուծության բաժինը ուսումնառողների շրջանում սկսել է իրականացնել հարցումներ կրթական ծառայություններից, դասընթացներից, տրամադրվող ռեսուրսներից և գիտահետազոտական աշխատանքներում նրանց ներգրավվածությունից նրանց բավարարվածությունը պարզելու նպատակով:

Աուդիտի և հարցումների արդյունքում ստացված տվյալների վերլուծությունը ներկայացվում է ՀԱԱՀ գիտական խորհրդի նիստի քննարկմանը, և առաջ եկած խնդիրների լուծման ուղղությամբ ընդունվում են որոշումներ: ԿԲՈՊ վարչության որակի վերահսկման և ինքնավերլուծության բաժինի կողմից անցկացվող հարցումների կազմակերպմանը մասնակցում են նաև ուսումնառողները:

ԴԱՍՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՀԱԱՀ-ում ներկայումս գործող ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման մեխանիզմները ապահովում են դիմորդների կայուն հոսք, սակայն ընդունվողների թվի աճին զուգահեռ մեծ թիվ են կազմում նաև բուհից

հեռացվողները: ՀԱԱՀ-ում ուսանողների կրթական կարիքների վերհանման հստակ քաղաքականությունը բացակայում է, իսկ իրականացվող միջոցառումներն ու գործող ընթացակարգերը դեռևս լիարժեք չեն ապահովում ուսանողների կրթական կարիքների վերհանումը և դրանց լուծումը: Տվյալները, որոնք հավաքում է համալսարանը, դեռևս հնարավորություն չեն տալիս գնահատելու ուսանողների կրթական կարիքների վերհանման մեխանիզմների արդյունավետությունը: Մյուս կողմից, կրթական ծրագրերից ուսանողների բավարարվածության վերաբերյալ տեղեկատվության բացակայությունը հնարավորություն չի տալիս բարելավել մատուցվող կրթական ծառայությունների որակը:

ՄՈՒՀ-ում ուսանողներին օժանդակություն և ուղղորդման պլանավորված գործընթաց բուհը չի իրականացնում, ավելին՝ չի էլ պլանավորում իրականացնել, և այն հանգամանքը, թե վարչական անձնակազմից ում են ավելի հաճախ դիմում և որքանով են օժանդակություն ստանում նրանցից, անհրաժեշտ է կանոնակարգել: Ավելին, կանոնակարգումը անհրաժեշտ է իրականացնել հասցեավորված յուրաքանչյուր ստորաբաժանման և վարչական կազմի համար՝ դեկանատներ, ամբիոններ, պրոռեկտորներ, ռեկտոր:

Համալսարանում բացակայում են մեխանիզմները, որոնց միջոցով հնարավոր է գնահատել կրթական ծառայությունների որակի բարելավմանը միտված խորհրդատվությունների և լրացուցիչ պարապմունքների արդյունավետությունը:

Համալսարանում գործող կարիերայի զարգացման և խորհրդատվության կենտրոնը իր գործունեությունը հիմնականում ծավալում է «Ագրոբիզնես»-ի դեպարտամենտի ուսանողների համար, սակայն կուտակված դրական փորձը չի տարածվում համալսարանի մյուս ֆակուլտետների վրա: Արդյունքում՝ ցածր է ՀԱԱՀ աշխատանքի տեղավորման և խորհրդատվության բաժնի, որպես ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ մատուցող կառույցի գործունեության արդյունավետությունը:

Համալսարանում ուսումնառողներին գիտահետազոտական աշխատանքներում ներգրավվելու գործընթացը համակարգված բնույթ չի կրում: Ցածր է ՈՒԳԸ աշխատանքներին մասնակցող ուսանողների հարաբերական թիվը, ինչը կարող է ազդել մագիստրոսական կրթության կողմից ուսանողների մոտ հետազոտական կարողությունների ձևավորման որակի վրա:

Համալսարանում գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման որոշ մեխանիզմներ, որոնք կարիք ունեն հետագա հստակեցման և կատարելագործման: ՈՒսանողներին մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմների արդյունավետության գնահատմանը վերաբերող ցուցանիշները բացակայում են:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. ՀԱԱՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը **ՉԱՓԱՆԻՇ 4**-ի պահանջներին ***մասնակի բավարար է:***

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ. Անհրաժեշտ է.

- ուսանողների հավաքագրման գործընթացը դարձնել հասցեագրված՝ հաշվի առնելով հանրապետությունում համապատասխան ոլորտի մասնագետների պահանջարկը,
- մշակել ուսանողների կրթական կարիքների վերհանման քաղաքականություն և իրականացման մեխանիզմներ, որոնք միտված են մատուցվող կրթական ծառայությունների որակի բարելավմանը,

- մշակել կրթական ծառայությունների որակի բարելավումը միտված խորհրդատվությունների և լրացուցիչ պարապմունքների արդյունավետության գնահատման մեխանիզմներ,

- կարիերայի կենտրոնի գործունեության շրջանակը ընդլայնել՝ այն նպատակաուղղել շրջանավարտների զբաղվածության և շրջանավարտների հետ կայուն հետադարձ կապի ապահովմանը,

- համալսարանում ուսումնառողներին գիտահետազոտական աշխատանքներում ներգրավվելու գործընթացը դարձնել համակարգված, և այն նպատակաուղղել ուսանողներ գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորմամբ,

- քայլեր ձեռնարկել ուսանողների իրավունքների պաշտպանությանը միտված պատասխանատու մարմին աշխատանքների բարելավման համար:

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ և ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունը ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ.

5.1. ՀԱԱՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմի ընտրությունը կատարվում է մրցույթային կարգով՝ ելնելով համալսարանի տարբեր մասնագիտական ամբիոնների ուսումնական ծրագրերի և մասնագիտությունների առանձնահատկություններից՝ նախապես հրապարակված չափանիշներով: Առանձին դեպքերում արտաքին համատեղությամբ աշխատանքի են հրավիրվում փորձառություն կամ մասնագիտական համապատասխան որակավորում ունեցող մասնագետներ: ՈՒսումնաօժանդակ կազմի ընտրությունն իրականացվում է ամբիոնի ղեկավարության կողմից հիմնականում համալսարանի լավագույն շրջանավարտների թվից (բակալավր կամ մագիստրոս)՝ ելնելով այդ ամբիոնում իրականացվող կրթական ծրագրերի առանձնահատկություններից:

Համապատասխան կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական անձնակազմի ապահովման նպատակով համալսարանում գործում է նաև ստաժորի ինստիտուտը, որի գործունեության ապահովման և դրա արդյունավետության բարձրացման գործընթացները հստակեցման կարք ունեն: Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության արդյունավետությունը ստուգվում է դասալսումների, ուսումնաօժանդակ անձնակազմի ատեստավորման, ավարտական ատեստացիայի արդյունքներով և ուսանողի կողմից անանուն հարցումների արդյունքների միջոցով:

Գործող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի աշխատանքի ընդունման և հեռացման քաղաքականության և ընթացակարգերի արդյունավետությունը հնարավոր չէ լիարժեք գնահատել, քանի որ որոշ մեխանիզմներ կրում են խիստ սուբյեկտիվ բնույթը և կարիք ունեն հետագա լրամշակման:

5.2. Համալսարանը իր կրթական ծրագրերի համար չի սահմանել պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող առանձին պահանջներ, այլ հղվում է մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչներին:

Պահանջներ են համարվում աշխատողի բազային կրթությունը և որակավորումը, աշխատանքային փորձը, դասավանդման կամ արտադրական (տվյալ ոլորտի) փորձը և մրցույթի արդյունքները: Հարցված դասախոսները բավարարված են ընտրության գործընթացով, ուսանողներն ընդհանուր առմամբ ևս բավարարված են դասախոսական կազմի որակից:

Համալսարանում գործող կարգը և ընթացակարգերը հնարավորություն չեն տալիս ապահովել հետադարձ կապ և գնահատել, թե ինչպես են գործում դասախոսական կազմի մասնագիտական որակին ներկայացվող պահանջների սահմանման գործող մեխանիզմները և արդյունավետ են արդյոք դրանք:

5.3. Դասախոսական կազմի գնահատման համար Համալսարանում օգտագործվում են դասալսումները և ուսանողների շրջանում հարցումները, որոնք կատարելագործման կարիք ունեն: Արդյունքները քննարկվում են կառավարման տարբեր մակարդակներում: Համալսարանի կողմից կիրառվող գնահատման ձևերը առանձին գործընթացներ են, սակայն համակարգված չեն և չունեն մշակված քաղաքականություն: Դեռևս կանոնակարգված չեն դասախոսական կադրերի աշխատանքի արդյունավետության գնահատման մեխանիզմները, գործող մեխանիզմներն էլ միշտ չէ, որ կիրառվում են լիարժեք հետևողականությամբ:

Կարևորվում է դասախոսների կողմից միմյանց գնահատման պրակտիկան, սակայն համալսարանում դեռևս չեն գործում ֆորմալ մեխանիզմներ, որոնք կապահովեն այդ գործընթացի արդյունավետությունը: Փոխգնահատումը հազվադեպ է իրականացվում: Հազվադեպ են նաև ուսանողության շրջանում անցկացված հարցումների արդյունքների վերլուծության և դրանց հիման վրա որոշումների կայացման օրինակները:

5.4. ՀԱԱՀ-ը փորձ է կատարում հաշվետվությունների միջոցով գնահատել պրոֆեսորադասախոսական կազմի ներքին և արտաքին կարիքները, սակայն դրա համար անհրաժեշտ հստակ մշակված մեխանիզմները բացակայում են: Այնուամենայնիվ, բուհը պլանավորում է Որակավորման բարձրացման և վերաորակավորման բաժնի միջոցով իրականացնել վերապատրաստման, որակավորման բարձրացման և վերաորակավորման դասընթացներ, որոնց մասնակցությունը պարտադիր է:

Որակավորման բարձրացման բաժինը կազմակերպում է դասախոսների որակավորման բարձրացման և ստաժավորման գործընթացը հիմնականում համալսարանի ուսումնափորձնական տնտեսություններում, գիտական կենտրոնների փորձարարական կայաններում և առաջավոր ֆերմերային տնտեսություններում. ինչպես նաև գիտահետազոտական, նախագծային, գիտաարտադրական ձեռնարկություններում և համալսարաններում ըստ հստակ ժամանակացույցի՝ 3 տարին մեկ անգամ: Երիտասարդ դասախոսներին վերապատրաստելու և տարեց դասախոսների փորձի փոխանակման նպատակով կիրառվում են փոխադարձ դասալսումները:

Սահմանվված են կատարելագործման արդյունքների ստուգման հետևյալ ձևերը՝ ավարտական աշխատանք և հաշվետվություն:

5.5. Համալսարանը փորձում է կադրային ներուժի պահպանման և գիտակրթական համակարգում աստիճանական սերնդափոխության հատուկ քաղաքականության մշակման միջոցով կանխել դասախոսական կազմի «ծերացումը» և խթանել երիտասարդացումը:

Համալսարանը ունի բարձրակարգ, բայց տարեց դասախոսական կազմ և դժվարությամբ է գտնում համապատասխան երիտասարդ և որակյալ մասնագետներ մի քանի պատճառներով (ցածր աշխատավարձ, քիչ ասպիրանտներ, մոտիվացիայի պակաս): Այս

գործոնը ոչ շատ հեռու ապագայում համալսարանին կարող է ռիսկի տակ դնել: Կրթության կառավարիչները տեղյակ են խնդրի մասին:

Համալսարանի կադրային ներուժի համալրման և բարելավման գործընթացն ընդգրկում է ասպիրանտուրայում ուսուցման միջոցով երիտասարդ կադրերի պատրաստումը, դասախոսական կազմի պարբերական վերապատրաստումն ու վերառրակավորումը, ստաժորների ինստիտուտի ներդրումը, Համալսարանում համապատասխան աշխատանքային միջավայրի և պայմանների ստեղծումը: Իրականացվում է հիմնական և համատեղությամբ աշխատող պրոֆեսորադասախոսական կազմի կայունությունն ապահովող քաղաքականություն՝ հիմնված մի շարք մոտեցումների, այդ թվում նաև ֆինանսական խրախուսման մեխանիզմների ներդրման վրա:

Համալսարանում քայլեր է ձեռնարկվում մասնագիտությունների կրթական ծրագրերի համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունության համար: Կայունության գնահատման համար վերլուծվում է իր գիտական ու դասախոսական ներուժի քանակական տվյալները և դրանց հիման եզրահանգումներ կատարվում իրականացվող մեխանիզմների արդյունավետության մասին:

5.6. Համալսարանը փորձում է պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականության ու ընթացակարգերի մշակման միջոցով ապահովել համապատասխան առաջընթացը, սակայն պրոֆեսորադասախոսական կազմի ներքին և արտաքին գնահատման գործընթացը դեռևս կանոնակարգված չէ, իսկ դրանց մեխանիզմները՝ ոչ հստակ գործուն:

5.7. Վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի գործունեության արդյունավետության գնահատման հատուկ կարգեր Համալսարանում դեռ չեն գործում: ՀԱԱՀ-ի վարչատնտեսական, ինժեներատեխնիկական, արտադրական, ուսումնաօժանդակ և այլ աշխատողների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ, ՀԱԱՀ-ի կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով: Համալսարանի ուսումնաօժանդակ կազմի վերահսկումը չի կարելի համարել լիովին արդյունավետ, քանի որ երբեմն վարչական աշխատակազմը միայն հիմնվում է լաբորանտի բազային կրթության փաստաթղթերի վրա՝ հաշվի չառնելով նրա ընդհանուր զարգացումը, պրակտիկ հմտությունները և ուսանողի հետ գործնական շփման ընդունակությունները: Միաժամանակ, հստակ չի երևում, որ համալսարանում կան ռազմավարական նպատակների իրականացմանն նպատակաուղղված վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի աշխատանքի արդյունավետության գնահատման մեխանիզմներ:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ. Կարելի է արձանագրել, որ համալսարանի մասնագիտական կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության վերաբերյալ հստակ պլանավորումը բացակայում է, գործող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի աշխատանքի ընդունման և հեռացման քաղաքականության և ընթացակարգերի արդյունավետությունը հնարավոր չէ լիարժեք գնահատել, քանի որ որոշ մեխանիզմներ կրում են խիստ սուբյեկտիվ բնույթ և կարիք ունեն հետագա լրամշակման:

Սեփական կրթական ծրագրերի համար պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջների բացակայությունը և հղումը մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչներին կասկածի տակ են դնում

բարձր որակավորում ունեցող առաջնակարգ մասնագետներով դասախոսական կազմի համալրման բուհի հավակնությունները:

ՀԱԱՀ-ում բացակայում են դասախոսական կադրերի աշխատանքի արդյունավետության գնահատման հստակ մեխանիզմները: Համալսարանի կողմից որպես գնահատման ձևեր կիրառված դասալսումները և ուսանողների շրջանում իրականացված հարցումները կարելի համարել միայն ընթացակարգեր, սակայն ոչ հստակ քաղաքականություն՝ խնդիրը լուծելու համար: Բացի այդ, գործող մեխանիզմներն էլ միշտ չէ, որ կիրառվում են լիարժեք հետևողականությամբ և հանգեցնում ցանկալի արդյունքների:

Թեև Համալսարանում իրականացվում է դասախոսների կատարելագործման միջոցառումներ, սակայն դրանք չեն իրականացվում ներքին և արտաքին գնահատումների արդյունքում բացահայտված կարիքներին համապատասխան: Այդ իսկ պատճառով դժվար է գնահատել կատարելագործման միջոցառումների արդյունավետությունը և պարզ չէ, թե ինչպես է իրականացվում գործընթացների պլանավորվումը, մասնավորապես ինչ տվյալներ են հավաքագրվում և ինչպիսի վերլուծությունների արդյունքում են կայացվում կատարելագործման վերաբերյալ որոշումները:

Չնայած համալսարանում քայլեր են ձեռնարկվում մասնագիտությունների կրթական ծրագրերի համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունության համար, սակայն լուրջ խնդիրներ կան անձնակազմի երիտասարդացման գործում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. ՀԱԱՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը **ՉԱՓԱՆԻՇ 5**-ի պահանջներին ***մասամբ է բավարար:***

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ. Անհրաժեշտ է.

- մշակել պրոֆեսորադասախոսական կազմը երիտասարդ կադրերով համալրման քաղաքականություն, կատարելագործել պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի աշխատանքի գնահատման գործիքները,
- մշակել համալսարանի յուրաքանչյուր կրթական ծրագրով մասնագիտական կրթության արդյունավետության բարձրացմանը միտված պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ,
- մշակել դասախոսական կազմի պարբերաբար գնահատման քաղաքականություն և ընթացակարգեր, որոնք միտված են մասնագիտական կրթության արդյունավետության բարձրացմանը,
- մշակել դասախոսների կարիքների ներքին և արտաքին գնահատման համակարգ, դրա կիրակման մեխանիզմներ և դրանց հիման վրա իրականացնել պարբերական գնահատումներ ու դասախոսների կատարելագործման ավելի նպատակաուղղված աշխատանքներ,
- մշակել պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր,
- մշակել որակի մշակույթի ձևավորմանը միտված վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի գործունեության արդյունավետության գնահատման կարգեր և մեխանիզմներ:

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ***ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:***

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ.

6.1. ՀԱԱՀ-ն 2007թ. սկսած զարգացման իր բոլոր ռազմավարական պլանավորման փաստաթղթերով նախատեսել է հետազոտական ոլորտում իրականացնել իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող խնդիրներ և գործառույթներ:

Մասնավորապես, 2012-2017թթ. ռազմավարական պլանով ՀԱԱՀ-ը նպատակ բարձրացնել գիտահետազոտական-ինովացիոն գործունեության արդյունավետությունը, միջազգայնացնել գիտահետազոտական գործունեությունը, ապրանքայնացնել գիտական հետազոտությունների անդյունքները և ամրապնդել գիտության, կրթության ու արտադրության կապը:

Համալսարանում առկա է գիտական կենտրոնի աշխատանքների պլանավորում, ինչպես նաև հետազոտական ոլորտում հետաքրքրությունների և հավակնությունների ռազմավարության արդիականությունն ու արդյունավետությունը գնահատող ցուցիչներ:

Հետազոտական ոլորտում իրականացվող գործընթացների նախնական պլանավորման ու ժամանակացույցի ձևավորման համար համալսարանում հաստատված է առաջնահերթությունների ծրագիր. հետազոտությունների բնագավառների (հիմնարար և կիրառական) ու ուղղությունների ընտրության ժամանակ համալսարանը հիմնականում առաջնորդվում է ՀՀ կառավարության սահմանած գիտության գերակայությունների ցանկով և ՀՀ Գյուղատնտեսության նախարարության մշակումների առաջնահերթություններով, ինչպես նաև գիտնականների անձնական հետաքրքրություններով:

6.2. Համալսարանն ունի հետազոտության ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնությունները արտահայտող երկարաժամկետ ռազմավարական հայեցակարգեր (2007-2011 և 2010-2015թթ. և մինչև 2025թ. և 2012-2017թթ. զարգացման ռազմավարական պլան և ծրագիր):

Համալսարանի յուրաքանչյուր ստորաբաժանում (ֆակուլտետ, ամբիոն, պրոբլեմային լաբորատորիա), իր մասնագիտացմանը և հետազոտությունների սահմանված ուղղությանը համապատասխան, մշակում է գիտական հետազոտությունների ծրագրեր՝ դնելով կոնկրետ խնդիրներ, սահմանելով իրականացման ժամկետներ և ձևավորելով հետազոտական խմբեր: Կախված պլանավորվող հետազոտությունների կատարման ժամկետներից, ձևավորվում են հետազոտությունների կարճաժամկետ (մինչև մեկ տարի տևողությամբ) և միջնաժամկետ (երեք տարուց ոչ ավել տևողությամբ) ծրագրեր: Համալսարանում գործում են նաև երկարաժամկետ ծրագրեր (չորս և ավելի տարի տևողությամբ):

Համալսարանում առկա միջնաժամկետ և կարճաժամկետ հետազոտությունների արդիականությունն ու արդյունավետությունը գնահատելու համար որպես գնահատման ցուցիչներ ընդունվում են՝ պետբյուջեից հետազոտությունների շարունակական ֆինանսավորումը, ավարտված հետազոտությունների հիման վրա պաշտպանված գիտական թեզերը, հրատարակված հոդվածները և արտադրության մեջ դրանց արդյունքների ներդրումը:

6.3. ՀԱԱՀ-ն փորձում է գիտական նոր սարքավորումների ձեռքբերման, գիտահետազոտական կառույցների հետ համագործակցության, փորձի և կադրերի փոխանակման, Ազրարային ոլորտին նվիրված միջազգային ամենամյա գիտաժողովների կազմակերպման և հետազոտական աշխատանքների արդյունքների քննարկման, տարբեր միջազգային խորհրդակցությունների, սեմինարների և քննարկումների կազմակերպման միջոցով ապահովել հետազոտությունների իրականացումը և զարգացումը:

Համալսարանում որակյալ հետազոտությունների իրականացման համար առկա գործընթացների արդյունավետության և արդիականության գնահատման համար որպես ցուցիչ ընդունվել են դրանցից յուրաքանչյուրի կատարման չափը (գիտական սարքավորումներով հետազոտական բազայի համալրում, հանրապետական և արտասահմանյան երկրների և դրանց գիտահետազոտական կառույցների հետ համագործակցության նպատակով կնքված պայմանագրերի քանակ, գործուղումների քանակ և վայրեր, ֆինանսավորման չափ): Որպես բարելավում կարելի է նշել երիտասարդ աշխատակազմի հետազոտական գործունեության խրախուսման համալսարանի վարած քաղաքականությունը: Այդ առումով Համալսարանը մշտապես աջակցում է երիտասարդ հետազոտողների մասնակցությանը միջազգային գիտաժողովներին՝ հոգալով մասնակցության ծախսերի մի մասը:

6.4. ՀԱԱՀ-ը փորձում է ամենամյա միջազգային գիտաժողովների, միջազգային գրախոսվող մասնագիտական ամսագրերում և գիտական պարբերականներում համալսարանական հետազոտողների հոդվածների տպագրական, արտասահմանյան առաջատար ԲՈՒՀ-երի մագիստրոսի և հետազոտողի համատեղ ծրագրերի ստեղծմամբ ասպիրանտների և մագիստրանտների շարժունության խթանման, արտասահմանյան առաջատար համալսարանների և գիտական կենտրոնների հետ գիտական համագործակցության ընդլայնման, արտասահմանյան փորձագետների մասնակցությամբ հետազոտական ծրագրերի վերաբերյալ խորհրդատվությունների և սեմինարների կազմակերպման միջոցով ապահովել հետազոտական գործունեության միջազգայնացումը:

Համալսարանը, որպես իր հետազոտական գործունեության միջազգայնացման գնահատման մեխանիզմ, հաշվի է առնում Համալսարանի աշխատակիցների կողմից օտարերկրյա և տեղական ամսագրերում հրատարակված հոդվածների համամասնությունը: Հարկ է նշել, որ այդ համեմատությանից հետևում է ՀՀ-ում գրախոսվող ամսագրերում հրատարակված հոդվածների թվի զգալի գերակայությունը արտասահմանյան հրատարակումների թվի նկատմամբ, ինչը չի նպաստում հիմնական ռազմավարական ուղղություններով նախատեսվող և համալսարանում իրականացվող գիտական հետազոտությունների միջազգայնացման, դրանց մրցունակության բարձրացման ու միջազգային հետազոտական տարածքին ինտեգրման խնդիրների լուծմանը:

6.5. ՀԱԱՀ-ը գիտահետազոտական աշխատանքների շաղկապումը ուսումնական գործընթացի հետ համարում է ուսուցանման կատարելագործման ուղղություններից մեկը: Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցումը համալսարանը պլանավորել է իրականացնել դասախոսությունների թեմաներում հետազոտությունների արդյունքների ներառման, լաբորատոր և գործնական աշխատանքների կատարման ընթացքում հետազոտական սարքավորումների, հետազոտությունների ընթացքում նախագծված և կառուցված միջոցների ու մշակված մեթոդների կիրառման, հետազոտական աշխատանքների արդյունքների հիման վրա նոր

դասընթացների կազմակերպմամբ՝ ուսումնական ծրագրերի վերանայման, առկա գիտահետազոտական բազայի կիրառմամբ մագիստրանտների հետազոտական թեմաներով դիպլոմային աշխատանքների կատարման, ճարտարագիտական մասնագիտությունների դիպլոմային նախագծերի առաջադրանքով նախատեսվող կառուցվածքային հորինվածքի մշակման, ուսանողական գիտական ընկերության շրջանակներում իրականացվող թեմաների կատարման, պետբյուջետային և պայմանագրային հետազոտական աշխատանքներում ուսանողների մասնակցության միջոցով:

Գործնականում Համալսարանի կազմում գտնվող բոլոր պրոբլեմային լաբորատորիաները, գիտահետազոտական ինստիտուտները և գիտական կենտրոնները բազա են հանդիսանում ուսանողների ուսումնական պարապմունքների անցկացման համար: Վերջինս ոչ միայն նպաստում է դասավանդման կատարելագործմանը, այլ նաև գիտական ստորաբաժանումներում գիտնական-հետազոտողների հետ ուսանողների անմիջական շփումը խթանող գործոն է հանդիսանում հետազոտական աշխատանքների մեջ ուսանողների մի մասի ներգրավման համար:

Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմների աշխատունակության բավարարվածությունը գնահատվում է ծրագրերում ներգրավված ուսանողների թվի դինամիկայով, ուսանողների հեղինակությամբ կամ համահեղինակությամբ հրատարակված հոդվածներով, թեզիսներով, ստացված արտոնագրերով: Սակայն, պետք է նշել, որ առկա վերլուծությունները բավարար չեն գնահատելու համար հետազոտություններ-ուսումնական գործընթաց կապի արդյունավետությունը:

ԴԱՍՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ. Համալսարանում իրականացվում են հետազոտություններ, առկա է հետազոտությունների իրականացման հստակ պլանավորում, իրականացվում են որոշակի գործընթացներ, սակայն բացակայում են հստակ քաղաքականությունը և ընթացակարգերը: Չնայած որ վերջին 3 տարիների կտրվածքով միջնաժամկետ և կարճաժամկետ հետազոտությունների արդյունավետությունը համալսարանը գնահատում է բավարար, սակայն իրականացված ծրագրերի դինամիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանց քանակը նվազել է:

Համալսարանի հետազոտության ոլորտում կատարվող ֆինանսական ներդրումները կախված են բացառապես արտաքին աղբյուրներից, ինչը դժվարություններ է հարուցում հետազոտության ոլորտում համալսարանի հետաքրքրությունների և հավակնությունների իրականացմանը: Արդեն դա ցածրացնում է հետազոտական բազայի նյութատեխնիկական վերազինման տեմպերը, անհասանելի է դարձնում թանկարժեք գիտական սարքավորումները և օտարալեզու ժամանակակից գրականությունը:

Համալսարանում առկա է որոշակի պլանավորում հետազոտական գործունեության միջազգայնացման ուղղությամբ: Հետազոտական գործունեության միջազգայնացման գնահատման մեխանիզմ է դիտարկվում համալսարանի աշխատակիցների կողմից օտարերկրյա և տեղական ամսագրերում հրատարակված հոդվածների համամասնությունը, ինչը մեր կարծիքով գնահատման համար ամբողջական տեղեկատվություն չի կարող տալ: Այս բնագավառում ձեռքբերումները, հայտարարված հավակնությունների համեմատությամբ, ավելի քան քիչ են: Այսպիսով համալսարանը անելիքներ ունի հետազոտական գործունեության միջազգայնացման ուղղությամբ:

Համալսարանում իրականացվում են գործընթացներ, որոնք միտված են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցմանը, սակայն դրանք կանոնակարգված բնույթ չեն կրում: Հետազոտության արդյունքների դասավանդման պրոցեսում կիրառելը և մագիստրատուրայի ու ասպիրանտուրայի ուսանողներին հետազոտության մեջ ներգրավելը վկայում են դասավանդման և հետազոտության միջև կապի առկայության մասին, սակայն ուսանողների համահեղինակությամբ տպագրված աշխատանքների թվի աճին զուգահեռ պակասել է պաշտպանված ատենախոսությունների քանակը: ՀԱԱՀ-ը ինքը չի գնահատել, իսկ առկա վերլուծությունները բավարար չեն գնահատելու հետազոտություններ-ուսումնական գործընթաց կապի արդյունավետությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. ՀԱԱՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը **ՉԱՓԱՆԻՇ 6**-ի պահանջներին ***մասամբ է բավարար :***

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ. Անհրաժեշտ է.

- ստեղծել մեխանիզմներ հետազոտական ոլորտում համալսարանի հետաքրքրությունների և հավակնությունների բացահայտման համար,
- մշակել հետազոտությունների իրականացման և զարգացումը ապահովող հստակ քաղաքականություն և ընթացակարգեր,
- կանոնակարգել հետազոտական գործունեության միջազգայնացման ընդլայնմանը նպաստող գործողությունները,
- մշակել հետազոտական գործունեությունը ուսումնական գործընթացի հետ փոխկապակցելուն ուղղված քաղաքականություն, ընթացակարգեր և մեխանիզմներ:

VII ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ***Համալսարանն ունի անհրաժեշտ ռեսուրսներ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության և նպատակների արդյունավետ իրականացման համար:***

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ.

7.1.Համալսարանում մասնագիտություններ իկրթականծ րագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնականմ իջավայրը ապահովում է ուսումնափորձնական տնտեսությունների, ուսումնագիտական լաբորատորիաների, գրադարանի և ընթերցասրահների, SS կենտրոնի, պաշտանական կայքերի, անատոմիական թանգարանի, անասնաբուժական երկու կլինիկաների, «ֆանտոմ» ծննդօգնության ուսուցման կենտրոնի, դիահերձարանի, անասնաբուժական դեղատան, վիրահատարանի, ռենտգեն կաբինետի միջոցով:

Համալսարանի շենքային պայմանները՝ լսարանների և լաբորատորիաների մակերեսները բավարարում են համապատասխան մասնագիտական կրթության իրականացման համար, սակայն նյութատեխնիկական հագեցվածության աստիճանը դեռևս բավարար չէ: Կրթության կառավարիչները ընդունում են, որ լաբորատորիաներում օգտագործվող ոչ բոլոր տեխնիկական միջոցները, լաբորատոր փորձասարքերը և էլեկտրոնային միջոցներն են արդիական, բացի այդ էական բարելավման կարիք ունի

գիտահետազոտական և ուսումնական լաբորատորիաների, ինչպես նաև մասնագիտական ամբիոնների կահավորանքը: ՈՒսումնափորձարարական տնտեսությունները նույնպես ոչ բավարար չափով են ապահովված ժամանակակից գյուղատնտեսական մեքենաներով և սարքավորումներով: Դրա մասին է վկայում նաև համալսարանի կողմից իրականացված հարցումների վերլուծությունը և անբավարար գնահատված ռեսուրսների առակայությունը:

Դասախոսները և ուսումնառողները բավարարված են ընթերցասրահների կահավորվածությա նաստիճանից, գրադարանում առկա հիմնական մասնագիտական և ժամանակակից գիտական գրականությունից և հատուկ կարևորում են նորաստեղծ էլեկտրոնային գրադարանը:

7.2. Համալսարանն իր առաքելությունն ու նպատակները իրականացնելու համար փորձում է ձևավորել կրթական միջավայրի զարգացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազա, որի ձեռք բերման համար պլանավորում է մշակել համապատասխան ֆինանսատնտեսական քաղաքականություն:

Համալսարանի ֆինանսական ռեսուրսները սուղ են. կառավարությունը տրամադրում է համալսարանի բյուջեի մի մասը, իսկ զգալի մասը գոյանում է ուսանողների վարձավճարներից (արտաբյուջետային տարեկան մուտքերը մոտ 3.6-4.3 անգամ գերազանցում են պետբյուջետայինը): Ներկայումս համալսարանը իր ծախսերի զգալի մասը (71%-76.39%) հատկացնում է աշխատավարձերին:

Անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով ապահովելու նպատակին ՀԱԱՀ-ը պետական բյուջեից հատկացված միջոցներից 2007-2011թթ. համարյա ոչինչ չի հատկացրել, բացառությամբ 2010 թ. տնտեսական ծախսերի, ինչը կազմել է տվյալ տարվա պետական հատկացումների 0.52%-ը: Այլ աղբյուրներից նույն ժամանակամիջոցում հատկացված ֆինանսական միջոցների առավելագույն չափը յուրաքանչյուր տարվա համար չի անցնում ողջ արտաբյուջեի 6 %-ը:

Գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ որոշ միջոցներ և շատ քիչ քանակով ժամանակակից սարքավորումներ ձեռք են բերվում հիմնականում արտասահմանյան կամ տեղական գրանտային ծրագրերի ֆինանսավորման միջոցներով:

Անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով ապահովելու նպատակի համար հատկացվող ֆինանսական ռեսուրսների կոնկրետ պլանավորումը, հատկացման գործընթացը և կարիքները բացահայտող մեխանիզմները դեռևս հստակ չեն, բացակայում են նաև առաջարկություններ գործընթացի պլանավորման և կատարելագործման վերաբերյալ:

7.3. ՀԱԱՀ-ի ֆինանսատնտեսական գործունեության մեջ ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականությունը բացակայում է: Գործնականում ֆինանսների բաշխման համար հիմք են հանդիսանում ՀԱԱՀ ամբիոնների, ֆակուլտետների կողմից ներկայացված առաջարկները, որոնք քննարկվում են ռեկտորատում, և ելնելով համալսարանի ֆինանսական հնարավորություններից, բավարարվում կամ մերժվում են:

ՀԱԱՀ-ը բարձրագույն կրթության ֆինանսավորման բարեփոխումների կարևոր սկզբունք է համարում բարձրագույն կրթության ֆինանսավորման աղբյուրների դիվերսիֆիկացիան կամ տարբերակումը, որը անհրաժեշտ պայման է Համալսարանի ֆինանսական վիճակի կայունության ապահովման համար: Ֆինանսական մուտքերի կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ են կազմում ուսման վարձավճարները, իսկ մասնավոր աջակցության այլ աղբյուրների մասը բավականին համեստ է, ինչը Համալսարանը բացատրում է նրանով, որ մասնավոր հատվածի համար բարձրագույն կրթական համակարգում գիտահետազոտական աշխատանքներ իրականացնելու կամ այդ

ուղղությամբ ներդրումներ կատարելու խթաններ քիչ կան: Միաժամանակ, Համալսարանի կրթական գործընթացում գիտահետազոտական աշխատանքների ինտեգրման գործընթացի հիմնական թերություններից մեկն այն է, որ ավանդաբար գիտահետազոտական աշխատանքները հիմնականում տարանջատված են կրթությունից:

Մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականության գնահատման վերաբերյալ գործիքներ նույնպես առայժմ բացակայում են:

7.4. Համալսարանը հավակնում է ստեղծել միջազգային և եվրոպական կրթական չափանիշներին համապատասխանող նյութատեխնիկական բազա՝ ինչպես նաև համալսարանի և նրա մասնաճյուղերի նյութատեխնիկական բազայի զարգացման պլաններ, ինչը կնպաստի կրթության որակի շարունակական բարելավմանը և կայունությանը: Համալսարանն ամեն տարի իրականացնում է լսարանային գույքի ձեռքբերման աշխատանքներ և կարևորում է նաև ուսումնաարտադրական լաբորատորիաների, ուսումնափորձնական տնտեսությունների բարելավումը, գրադարանային նոր ռեսուրսների ձեռքբերումը: Համալսարանում ստեղծվել է էլեկտրոնային գրադարան, ինչպես նաև բարելավվել է համալսարանի կայքը և մեծացել են կայքի հնարավորությունները:

ՈՒսումնափորձնական տնտեսություններում առկա են հնարավորություններ տեսական գիտելիքների հիման վրա ուսանողների գործնական հմտությունների զարգացման և կրթության շարունակական բարելավման համար, սակայն նկատելի է, որ ուսումնափորձարարական աշխատանքների իրականացման համար տեղում բավարար պայմաններ չեն ստեղծվել, և նոր տեխնոլոգիաների ներդրումը այդ տնտեսություններում ընթանում է դանդաղ: Կան ամբիոններ, որոնց լաբորատոր հագեցվածության մակարդակը բավարար չէ մասնագիտական կրթական ծրագրերի լիարժեք իրականացման համար:

7.5. Համալսարանի գործավարության և փաստաթղթաշրջանառության, նպատակով ռեկտորի հրամանով կազմվել և շրջանառության մեջ է դրվել «ՀՊԱՀ գործավարության հրահանգը» փաստաթուղթը, իսկ գործավարությունն իրականացվում է գրասենյակի միջոցով: Համալսարանի փաստաթղթաշրջանառության կարևոր օղակներից են ամբիոնների և դեկանատների գործունեության համար պարտադիր փաստաթղթերի վարումը: Համալսարանի ուսումնամեթոդական կենտրոնի կողմից կազմվել է ամբիոններում և դեկանատներում պահվող և վարվող փաստաթղթերի անվանացանկը:

Փաստաթղթավարման գործընթացները գնահատվում են ՏՏ Կենտրոնի հաշվետվությունների, ինչպես նաև Համալսարանի փաստաթղթաշրջանառության վերահսկման միջոցով:

Ռեսուրսների դիտարկումը ցույց տվեց, որ համալսարանն իր բոլոր ստորաբաժանումներում հավաքագրում է մեծ ծավալով տվյալներ, սակայն, բացակայում է վերջիններիս վերլուծության, անհրաժեշտ տեղեկատվության վերածելու և որոշումների կայացման գործընթացում դրանց կիրառելու հստակ գործընթացը:

Համալսարանը չունի տեղեկատվության կառավարման ձևակերպված և հաստատված քաղաքականություն որպես առանձին փաստաթուղթ, իսկ որոշ գործընթացներ կարգավորող փաստաթղթեր մշակվել են ինքնավերլուծության արդյունքում:

7.6. ՀԱԱՀ-ը իր բուժկետի, «Զարթոնք» հանգստյան տան, աշխատանքի և հրշեջ անվտանգության, ինչպես նաև պահակային ծառայության աշխատակիցների միջոցով փորձում է ստեղծել ապահով և անվտանգ միջավայր իր ուսանողների և աշխատակիցների

համար: Բուժկետի, հանգստյան տան, հրշեջ և անվտանգության ծառայություններից ուսանողները և աշխատակիցները ընդհանուր առումով գոհ են:

Առողջապահական ոլորտի և հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին հարմար միջավայրի ստեղծման նպատակով համալսարանի բյուջեում ֆինանսներ չեն նախատեսվում, ինչը վկայում է, որ բարեփոխումների իմաստով առկա են հիմնախնդիրներ, որոնք լուծում են պահանջում:

7.7. Համալսարանը 2012 թ-ին ինքնավերլուծություն իրականացնելու պահանջից ելնելով իրականացրել է հարցում ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների (ուսումնափորձնական, տրանսպորտային, գրադարանային և տեղեկատվական տեխնոլոգիաների) կիրառելիությունը և հասանելիությունը գնահատելու նպատակով, սակայն առայժմ չեն մշակվել տրամադրվող ռեսուրսների արդյունավետության գնահատման մեխանիզմներ:

ԴԱՍՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ. Համալսարանը սահմանափակ ռեսուրսներով փորձում է ապահովել համապատասխան կրթական և աշխատանքային միջավայր: Համալսարանում առկա ռեսուրսները հիմնականում հին են, բացառությամբ ագրոբիզնեսի դեպարտամենտի: Ջանքեր են գործադրվում ստեղծված իրավիճակում դասավանդելու և հետազոտություն իրականացնելու համար: Այնուամենայնիվ, բարձրագույն կրթությանը ներկայացվող մարտահրավերների պայմաններում անհրաժեշտ կլինի էական ներդրումներ կատարել և՛ ռեսուրսների բարելավման, և՛ սարքավորումների նորացման ուղղությամբ:

Համալսարանն իր առաքելությունը և նպատակներն իրականացնելու համար հատկացնում է այնքան ֆինանսական ռեսուրսներ, որքան թույլ են տալիս բուհի ֆինանսական հնարավորությունները: Մի կողմից այդ ռեսուրսները չեն բավականացնում, որպեսզի ստորաբաժանումները անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով ապահովվեն, մյուս կողմից էլ բաշխման հստակ քաղաքականության ցացակայության պայմաններում չի իրականացվում առաջնահերթությունների վերհանում և համապատասխան պլանավորում ըստ այդ առաջնահերթությունների:

Համալսարանը չունի տեղեկատվության կառավարման ձևակերպված և հաստատված քաղաքականություն: Սակայն, տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության ոլորտների ընթացակարգերը և կատարված աշխատանքները թույլ են տալիս եզրակացնել, որ այդ ոլորտների բնականոն գործունեությունն ապահովող առկա կառույցներն ունեն անհրաժեշտ փաստաթղթեր:

Որակի շարունակական բարելավման և կայունության ապահովման նպատակով ուսումնական ռեսուրսային բազան ընդլայնելու և զարգացնելու ուղղությամբ աշխատանքներ տարվում են, սակայն ֆինանսական ռեսուրսների սահմանափակ լինելու պատճառով ամբողջությամբ իրականացնել ռազմավարական պլանով նախատեսված խնդիրները չի հաջողվել: Հիմնականում դա վերաբերում է ուսանողների ազրարային կրթության տեսական գիտելիքների կիրառմանը և գործնական հմտությունների ամրապնդմանը ներկայումս համալսարանի տրամադրության տակ գտնվող ռեսուրսների պայմաններում, երբ անհրաժեշտ ծավալով չեն օգտագործվում նույնիսկ ուսումնափորձնական տնտեսությունների առկա ռեսուրսները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. ՀԱԱՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը **ՉԱՓԱՆԻՇ 7**-ի պահանջներին ***մասամբ է բավարար:***

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ. Անհրաժեշտ է.

- շարունակաբար բարելավել ՀԱԱՀ ուսումնանյութական բազան, լաբորատորաների հագեցվածությունը՝ մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայրը կատարելագործելու և միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով,

- մշակել այնպիսի ֆինանսական քաղաքականություն, որն ուղղված կլինի ներդրումային միջավայրի ստեղծմանը, ինչն էլ իր հերթին կնպաստի անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով համալսարանին ապահովելու ու գործարկելու գործին,

- մշակել մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն և կրթական ծրագրերի նպատակների իրականացմանը միտված կարիքների վերհանման մեխանիզմներ,

- մշակել մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման համար, անհրաժեշտ ռեսուրսային բազայի հնարավորությունների գնահատման մեխանիզմներ և բարձրացնել այդ հնարավորությունների օգտագործման արդյունավետությունը,

- մշակել տեղեկատվության և փաստաթղթավարման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգեր,

-մշակել ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ Ը

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ.

8.1. ՀԱԱՀ-ը փորձում է իր շահեկիցներին ներկայացնել արտաքին (բուհի հաշվետվությունների տարածում կայք-էջի, Լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի, Կարիերայի զարգացման և խորհրդատվության կենտրոնի միջոցով) և ներքին (ռեկտորի, ուսումնական գծով պրոռեկտորի, դեկանատների և ամբիոնների տարեկան հաշվետվություններ) հաշվետվությունների տարբեր ձևեր:

Համալսարանի բոլոր կառուցվածքային ստորաբաժանումներն իրենց գործունեության ոլորտների համար հաշվետու են վերադաս կառույցներին, ինչն ամրագրված է համապատասխան կանոնակարգերով, ընթացակարգերով, հրահանգներով, և ապահովում է ներքին հաշվետվողականությունը: Առկա է ամբիոնների և ֆակուլտետների տարեկան հաշվետվության կազմման մասին ուղեցույց: Յուրաքանչյուր տարի օգոստոս ամսին Գիտական խորհրդում քննարկվում է նաև Համալսարանի գործունեության մասին հաշվետվությունը, որը մշակվում և զեկուցվում է ուսումնական աշխատանքների պրոռեկտորի կողմից:

Համալսարանի կառավարման խորհուրդը քննարկում է տարեկան գործունեության մասին ռեկտորի հաշվետվությունը, որը կազմվում է բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների հաշվետվությունների հիման վրա: Սկսած 2006 թվականից Համալսարանի գործունեության ամբողջական հաշվետվությունը հրատարակվում և տրամադրվում է բոլոր կառուցվածքային ստորաբաժանումներին, իսկ հաշվետվության սեղմ տարբերակը հրապարակվում է ՀԱԱՀ-ի պաշտոնական կայքում:

8.2. ՀԱԱՀ-ը փորձում է իր տարբեր կայք-էջերով և պաշտոնաթերթի միջոցով ապահովել իր ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը: Թափանցիկության ապահովման համար կայքում տեղակայվել են համալսարանի պատմությունը, առաքելությունը, ռեկտորի տարեկան հաշվետվությունները ամփոփ ձևով, տեղեկատվություն Համալսարանի ուսումնական, միջազգային, գիտական, ուսանողական կյանքի և նորությունների, համալսարանի և նրա մասնաճյուղերի, մասնագիտությունների, պրոֆեսորադասախոսական և ուսանողական համակազմի վերաբերյալ և այլն: Թվայնացվել և կայքի միջոցով դասախոսների և ուսանողների համար հասանելի է դարձել գրադարանային ֆոնդը և համալսարանի տեղեկագրերը:

Համալսարանի Ագրոբիզնեսի ուսուցման դեպարտամենտը նույնպես ունի իր պաշտոնական էջը, որտեղ տեղադրված են ամբողջական տեղեկություն դեպարտամենտի, նրա աշխատանքների մասին:

Համալսարանն ունի պաշտոնաթերթ, որում լուսաբանվում են ռեկտորատի, գիտխորհրդի որոշումները, առկա այլ հարցեր, նորություններ: Պաշտոնաթերթի համարները էլեկտրոնային տարբերակով տեղադրված են նաև ՀԱԱՀ պաշտոնական կայքում: Քաղաքացիները լրացուցիչ տեղեկությունների համար կարող են դիմել Համալսարանի ստորաբաժանումներից յուրաքանչյուրին և ստանալ անհրաժեշտ տեղեկություններ:

Համալսարանը որպես գործընթացների և ընթացակարգերի թափանցիկության և հասարակությանը հասանելիության ցուցիչ դիտարկում է կայքի այցելուների թվաքանակը:

8.3. Հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի հաստատման քաղաքականության և ընթացակարգերի բացակայության պայմաններում՝ ՀԱԱՀ-ում հետադարձ կապի ապահովման առումով գործում են հետևյալ գործիքները և միջոցները. նամակներ ուղղված ՀԱԱՀ ստորաբաժանման ղեկավարին, պրակտիկաներից և պետական քննություններից ստացվող կարծիքները, հանդիպումներ ռեկտորի հետ, հարցազրույցներ շահակիցների հետ, սեմինարների գնահատման հարցաթերթիկ և այլն: Առկա է ագրոբիզնեսի ուսուցման դեպարտամենտի շահակիցների կարիքների գնահատման փորձ, իսկ Համալսարանի մնացած ֆակուլտետներում այդ մեխանիզմները նոր են ներդրվում:

Հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմների արդյունքների վերլուծությունները, ինչպես նաև դրանց կիրառման մասին տեղեկությունները բացակայում են: Տեղեկատվությունը չի գրանցվում կանոնակարգված կերպով, դրանց հիմքերն առկա են միայն գրասենյակի նամակների գրանցամատյաններում: Չնայած Համալսարանի կայքում առկա են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի ապահովման նախադրյալներ, սակայն այդ արդյունքները չեն վերլուծվում և չեն հրապարակվում:

8.4. ՀԱԱՀ-ը վերապատրաստման, որակավորման և խորհրդատվական, օտար լեզուների ուսուցանման դասընթացների, ինչպես նաև դաստիարակչական միջոցառումների

կազմակերպման ու անցկացման միջոցով փորձում է ապահովել գիտելիքների փոխանցումը հասարակությանը:

Համալսարանում գործում են հասարակությանը գիտելիքի փոխանցման հետևյալ մեխանիզմները՝

- ՀՀ քաղծառայողների վերապատրաստման դասընթացներ,
- Խորհրդատվական դասընթացներ ֆերմերային տնտեսություններին («Ագրոգիտասփյուռ» դեպարտամենտի միջոցով իրականացված ծրագրեր 53 ջրօգտագործող ընկերություններում և խորհրդատվությունների կազմակերպում հանրապետության տարբեր մարզերի գյուղական տնտեսություններին),
- Օտար լեզվի դասընթացներ:

Քաղաքացիական ծառայողների վերապատրաստման գործընթացի, օտար լեզվի դասընթացների մասնակիցների, ասպիրանտների և հայցորդների որակավորման քննությունների արդյունքները մասին թվային տվյալների հիման վրա հնարավոր չէ հիմնավորել, որ հասարակությանը գիտելիքի փոխանցման մեխանիզմները աշխատում են և, բացի այդ, դրանք բավարար չեն վերոնշյալ մեխանիզմների կատարելագործման հնարավորությունների բացահայտման համար:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ. Համալսարանում առկա է տարեկան հաշվետվության կազմման գործընթաց, հստակ կանոնակարգված են հաշվետվողականության ներքին ձևերը, իսկ արտաքին ձևերը դեռևս կարիք ունեն կանոնակարգման և նպատակային դարձնելու: Տրամադրվող հաշվետվողականության թափանցիկությունը և հասանելիությունը շահակիցների լայն խավերին՝ դեռևս կատարելագործման կարիք ունի: Պարզաբանված չէ, թե տարեկան հաշվետվությունների միջոցով ինչ բացահայտումներ է կատարել իր համար համալսարանը և ինչ կարևոր եզրահանգումների է հանգել:

Հստակ սահմանված չէ նաև գործնական որոշումների կայացման հաշվետվողականությունը և պատասխանատվությունը: Շատ որոշումներ կայացվում են գիտխորհրդում՝ հիմք ընդունելով ամբիոնների վարիչների կամ դեկանների առաջարկությունները, սակայն որոշակի չէ պարտականությունների շղթան և ինչպես է յուրաքանչյուր մակարդակ հաշվետու կայացված որոշումների համար:

Համալսարանը չունի հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի հաստատման քաղաքականություն և ընթացակարգեր, չնայած ագրոբիզնեսի ուսուցման դեպարտամենտի շահակիցների կարիքների գնահատման փորձի առկայությանը: Չեն ստեղծվել հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի այնպիսի մեխանիզմներ, որոնք հնարավորություն կստեղծեին մասնագիտական կրթության որակի բարելավմանը և կրթական գործընթացի կազմակերպման արդյունավետության բարձրացմանը միտված որոշումների ընդունմանը:

Չնայած որ համալսարանը գտնում է, որ գործում են են հասարակությանը «գիտելիքի (արժեքների) փոխանցման հստակ մեխանիզմներ», սակայն այդ մեխանիզմների արդյունավետությունը ցածր է, քանի, որ համալսարանի կողմից նշված բոլոր ցուցանիշների գծով վերջին տարիներին անկում է գրանցվել:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. ՀԱԱՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը **ՉԱՓԱՆԻՇ 8**-ի պահանջներին ***մասամբ է բավարար:***

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ. Անհրաժեշտ է.

- կատարելագործել հաշվետվողականության արտաքին ձևերը և ներբուհական գործընթացների թափանցիկությունը արտաքին շահեկիցների համար,

- մշակել հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի հաստատման քաղաքականություն և ընթացակարգեր: Տարածել ազրոբիզնեսի ուսուցման դեպարտամենտի հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի փորձը և դրա մեխանիզմները ՀԱԱՀ-ի մյուս ստորաբաժանումներում,

-կատարելագործել համալսարանի կողմից հասարակությանը գիտելիքի փոխանցման մեխանիզմները:

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ.

9.1. Միջազգային համագործակցության ոլորտում համալսարանն ունի հստակ ձևակերպված նպատակ ու խնդիրներ, որոնք ամփոփված են «Միջազգային համագործակցության ոլորտում Հայաստանի պետական ազրարային համալսարանի քաղաքականությունը» փաստաթղթում՝ ինտեգրվել Եվրոպական միջազգային կրթական տարածքին:

Ռազմավարական և տարեկան գործողությունների ծրագրերով իրականացվել են՝ արտասահմանյան առաջատար համալսարանների և կազմակերպությունների հետ գործընկերային կապերի ընդլայնման և նոր կապերի ձևավորման աշխատանքներ, ուսանողների և գիտամանկավարժական կադրերի փոխանակման, Եվրոպական բարձրագույն կրթական տարածքում ինտեգրման, Եվրոպական և Ամերիկյան ԲՈՒՀ-երի հետ համատեղ ուսումնական ծրագրեր իրականացնելու և դիպլոմների փոխադարձ ճանաչման հետ կապված գործընթացներ:

9.2. ՀԱԱՀ-ը փորձում է իր Արտաքին կապերի դեպարտամենտի միջոցով ապահովել արտաքին կապերի և միջազգայնացման կանոնակարգված գործընթացը: Արտաքին կապերի դեպարտամենտը աջակցում է համալսարանի միջազգային կապերի հաստատման, պայմանագրերի կնքման, նոր համագործակցությունների ստեղծման գործընթացներին: Աշխատանքների կազմակերպման և կատարման ընթացքում դեպարտամենտը համագործակցում է ՀԱԱՀ-ի կառուցվածքային ստորաբաժանումների, ՀՀ պետական և հասարակական կազմակերպությունների, արտասահմանյան և միջազգային կազմակերպությունների և ընկերությունների, Հայաստանում հավատարմագրված դեսպանատների և ներկայացչությունների, այլ մարմինների պաշտոնատար անձանց, մասնագետների, փորձագետների հետ:

Արտաքին կապերի դեպարտամենտի իրականացված բոլոր գործառույթները վերանայվում են որոշակի ժամանակահատվածում, պատրաստվում է վերջնական հաշվետվություն, որը ներկայացվում է ռեկտորատի կամ գիտական խորհրդի նիստերին, վերլուծվում է, թե որքանով է իրականացված գործողությունը համապատասխանել սահմանված առաքելությանը և նպատակներին և որքանով է այն եղել արդյունավետ:

Հարկ է նշել, որ կանոնակարգված չէ, թե ինչ տեղեկատվության հիման վրա և ինչ ցուցիչների համաձայն է գնահատվում կառույցի գործունեությունը, որոնք են արտաքին կապերի և միջազգայնացմանը նպատակաուղղված գործառույթների արդյունավետության գնահատման մեխանիզմները:

9.3. ՀԱԱՀ-ը միջազգային համագործակցության ոլորտում իր մշակած քաղաքականության հիման վրա արտասահմանյան առանձին համալսարանների և կազմակերպությունների հետ կնքած փոխհամագործակցության համաձայնագրերի, կրեդիտների փոխանակման և ուսուցումների փոխճանաչման համաձայնագրերի, եվրոպական կրթական տարածքում ակադեմիական շարժունակության ապահովման ուղղությամբ տարվող աշխատանքների, անգլերենալեզու և գերմանալեզու դասընթացների կազմակերպման միջոցով փորձում է արդյունավետ համագործակցություն ձևավորել միջազգային հաստատությունների և կառույցների հետ ու նպաստել Համալսարանի միաջազգայնացմանը:

Համաձայն գործող 36 համաձայնագրերի համալսարանը համագործակցում է 17-ից ավել երկրների 30-ից ավելի համալսարանների և կազմակերպությունների հետ:

Համալսարանը, ուղղակի կապերից բացի, տարբեր կոնսորցիումների և ցանցերի շրջանակներում որպես անդամ կամ գործընկեր/համագործակից համագործակցում է 300-ից ավելի կազմակերպությունների հետ:

Որպես Համալսարանի միջազգային հաստատությունների և կառույցների հետ համագործակցության արդյունավետությանը գնահատող ցուցանիշներ օգտագործվել են գործող համաձայնագրերի թիվը, ՀԱԱՀ անձնակազմի կողմից իրականացված գործուղումները ըստ միջոցառումների, Էրազմուս Մունդուս ծրագրի շրջանակներում ՀԱԱՀ ակադեմիական շարժունությունը և ՀԱԱՀ ժամանած ուսանողների թիվը ըստ երկրների, ինչպես նաև արտասահման մեկնած ուսանողների թիվն ըստ ծրագրերի:

Միջազգային կազմակերպությունների հետ և ծրագրերի շրջանակում համագործակցությունը (DAAD, GTZ, Tempus, Erasmus Mundus) համալսարանին մեծ հնարավորություններ է ընձեռում միջազգային փորձառության համար: Այնուամենայնիվ, համալսարանը որևէ ֆինանսական միջոցներ չի հատկացնում այս գործառույթների իրականացման համար. անհրաժեշտ ծախսերը հոգում են կամ արտաքին կազմակերպությունները, կամ մասնակիցները:

9.4. ՀԱԱՀ-ը փորձում է Լեզվի ուսուցման և Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնների կողմից իրականացված ուսուցման, կրթական և ուսումնամեթոդական գործընթացի, օտարերկրյա դասախոսների ներգրավման, ինչպես նաև իր գրադարանի օտարալեզու գրականության և կայք-էջի օտարալեզու էջերի առկայության միջոցով ապահովել ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակը՝ համալսարանի միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու համար:

ՀԱԱՀ-ում գործում է Լեզվի կենտրոն, որը կազմակերպում է օտար լեզուների ուսուցում ՀԱԱՀ-ի աշխատակիցների, ասպիրանտների և ուսանողների համար, այդ թվում՝ արտասահմանցի ուսանողների համար:

Որպես ձեռք բերված արդյունքների գնահատման ցուցանիշներ համալսարանը ներկայացվում է անգլերեն լեզվով վերապատրաստված համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը ըստ ֆակուլտետների, օտար լեզուներով հասանելի գրականությունը ըստ մասնագիտությունների, ուսուցման նպատակով Ագրարային

համալսարան ժամանած ուսանողների քանակը, օտար լեզուներին տիրապետող դասավանդողների, վարչական աշխատողների թիվը և տոկոսը վերջին տարիների համար (Ագրոբիզնեսի դեպարտամենտի օրինակով): Սակայն դրանց գործուն ազդեցությունը միջազգայնացման արդյունավետության բարձրացման համար տեսանելի չէ:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ. Համալսարանում առկա է արտաքին կապերի և միջազգայնացման ուղղությամբ առաքելություն և նպատակներ, սակայն բացակայում են փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով համալսարանում գործող արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր:

Հարկ է նշել, որ Արտաքին կապերի դեպարտամենտի գործունեությունը կանոնակարգելու նպատակով 2006թ. հաստատված կանոնադրությունը փոփոխության չի ենթարկվել և պարզ չէ, թե այն ինչքանով է բավարարում համալսարանի միջազգայնացման ներկայիս պահանջներին:

Այնուամենայնիվ, համալսարանը որևէ ֆինանսական միջոցներ չի հատկացնում միջազգային հաստատությունների և կառույցների հետ համագործակցման գործառույթների իրականացման համար. անհրաժեշտ ծախսերը հոգում են կամ արտաքին կազմակերպությունները, կամ մասնակիցները: Այսպիսով, չնայած միջազգային կապերը ակտիվորեն խրախուսվում են, այս գործառույթների կայունության հարցն է առաջ գալիս. ի՞նչ կլինի, եթե համագործակցության միջազգային ֆինանսավորումը ընդհատվի:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. ՀԱԱՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը **ՉԱՓԱՆԻՇ 9**-ի պահանջներին ***մասամբ է բավարար:***

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ. Անհրաժեշտ է.

- մշակել փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելուն միտված խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր,
- ստեղծել համապատասխան մեխանիզմներ համալսարանի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքի գործառույթների արդյունավետության գնահատման համար ինչը միտված կլինի նրանց աշխատանքի բարելավմանը:

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ***ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:***

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ.

10.1. Համալսարանն ունի որակի ապահովման քաղաքականություն, իսկ որակի վերահսկման և ինքնավերլուծության բաժինը ստեղծվել է մեթոդաբանական և այլ փաստաթղթային հիմքերի մշակման և հետագա կատարելագործման նպատակով:

Համալսարանում առկա փոփոխությունը արտահայտվում է նրանով, որ որակի վերահսկման որոշակի գործընթացներ փոխարինվել են որակի ապահովման գործընթացներով, և ինքնավերլուծության ներկայացված փաստաթուղթը հավաստում է այդ փոփոխությունները:

Դեռևս քիչ են փաստերը, որ այդ քաղաքականությունը գործում է, չեն մշակված ընթացակարգերը, հատուկենտ են այնպիսի կոնկրետ միջոցառումները, որոնք կարող էին ցուցադրել բուհի կատարած աշխատանքը տվյալ ոլորտում:

10.2. ԿԲՌՊՈՎԻ վարչության կազմում ստեղծելով որակի ապահովման և ինքնավերլուծության բաժին մարդկային, նյութական և ֆինանսական որոշակի ռեսուրսներով՝ համալսարանը փորձում է իրականացնել որակի ներքին ապահովման գործընթացների կառավարումը:

Որակի ապահովման գործընթացները արդյունավետ կազմակերպելու համար համալսարանը վարչությանը տրամադրել է բավարար ռեսուրսներ, ծրագրային և կապի միջոցներ: Որակի ապահովման և ինքնավերլուծության բաժնում աշխատում է խիստ մոտիվացված անհրաժեշտ անձնակազմ՝ համապատասխան աշխատանքային նկարագրերով: Բացի այդ, ֆակուլտետներում հասարակական հիմունքներով գործում են որակի հանձնախմբեր, որոնք կարող են ավելացնել բաժնի աշխատանքի արդյունավետությունը: Բաժինն ապահովված է որակի ապահովման և որակի կառավարման կազմակերպման համար համապատասխան գրականությամբ:

Համալսարանը համարում է, որ տրամադրված մարդկային, նյութական և ֆինանսական միջոցները բավարար են, սակայն վերլուծված չէ, թե ինչքանով են այդ ռեսուրսները բավարարում համալսարանի որակի ներքին ապահովման գործընթացների արդյունավետ կառավարմանը:

10.3. ՀԱԱՀ-ը որակի ապահովման գործընթացներում փորձում է ներգրավել ներքին (համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումներ, պրոֆեսորադասախոսական անձնակազմ, ուսանողներ, վարչական աշխատողներ) և արտաքին շահակիցներին:

Արտաքին շահակիցները ներգրավված են պետական քննական հանձնաժողովներում, կառավարման խորհրդում, գիտական խորհրդում: ՀԱԱՀ-ի պետական քննական հանձնաժողովի նախագահները պետական համակարգի և հանրապետության ագրոպարենային համակարգի տարբեր ոլորտների առաջատար մասնագետներ են: Նրանք ներկայացնում են իրենց կարծիքը և աշխատաշուկայի պահանջները՝ համալսարանի կրթական ծրագրերի վերափոխման, բարելավման համար:

Համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ուսանողների մի մասը ընդգրկվել և մասնակցել է ԿԲՌՊՈՎԻ վարչության կողմից անցկացված հարցումներին և ՀԱԱՀ-ի ինստիտուցիոնալ ինքնավերլուծության գործընթացին՝ հավաքագրելով համալսարանի գործընթացներին վերաբերող ինֆորմացիա, մասնակցելով որակի վերահսկման և ինքնավերլուծության բաժնի կողմից կազմակերպվող սեմինարներին:

Ներքին և արտաքին շահակիցները մասնակիորեն ներառված են որակի ապահովման գործընթացներում, սակայն նրանց ընդգրկվածությունը կանոնակարգված և համակարգային չէ, այլ կրում է դիպվածային բնույթ՝ պայմանավորված ինքնավերլուծության իրականացման մասնակցությամբ և ուսումնական գործընթացի վերահսկման իրականացմամբ:

10.4. Համալսարանում իրականացվող կրթական բարեփոխումների արդյունավետությունը բարձրացնելու և ինքնավերլուծության ու արտաքին գնահատման

գործընթացները իրականացնելու նպատակով, ՀԱԱՀ-ը պլանավորում է պարբերաբար վերանայել կրթության ոլորտում որակի ապահովման մեխանիզմները:

ՀԱԱՀ-ում 2009թ.-ից ստեղծվել և մինչ օրս աշխատանքներ է ծավալում որակի վերահսկման և ապահովման հանձնախումբը: Հետագայում, համալսարանում որակի ներքին ապահովման համակարգի զարգացման, իրականացվող կրթական բարեփոխումների արդյունավետությունը բարձրացնելու և ինքնավերլուծության ու արտաքին գնահատման գործընթացները իրականացնելու նպատակով 2011թ.-ին վերանայվել են կրթության ոլորտում որակի ապահովման մեխանիզմները:

Միաժամանակ մի շարք արտասահմանյան բուհերի որակի ապահովման և որակի կառավարման համակարգի ներդրման և զարգացման փորձի ուսումնասիրման միջոցով համալսարանը փորձում է հասկանալ իր կողմից իրականացվող գործընթացների արդյունավետությունը:

Համալսարանում որակի ներքին ապահովման համակարգը և որակի մշակույթը կայացման փուլում են: Այն չունի բավականաչափ մշակված տեղեկատվություն՝ կառուցվածքային փոփոխությունների արդյունավետության մասին եզրակացություն անելու համար, սակայն ինքնավերլուծության իրականացումը ցույց է տվել այդ համակարգի անհրաժեշտությունը և կարևորությունը համալսարանի համար:

10.5. ՀԱԱՀ-ն իր որակի վերահսկման և ինքնավերլուծության բաժնի միջոցով պլանավորում է կազմակերպել կրթական գործունեության մշտադիտարկում և աուդիտ, որակի ապահովման համար անհրաժեշտ տվյալների և տեղեկատվության հավաքագրում, ինչը բավարար հիմք կհանդիսանա արտաքին գնահատման գործընթացներին մասնակցելու համար:

Արտաքին գնահատման փուլ մտնելու համար ՀԱԱՀ-ի որակի վերահսկման և ինքնավերլուծության բաժինը կազմակերպում է որակի ապահովման համար որոշակի տվյալների հավաքագրում ըստ գործունեության ոլորտների: Ստացված տվյալները մշակվում, ամփոփվում և պահվում են ԿԲՌՊՈՎԻ վարչությունում տվյալների բազայի տեսքով, որն էլ օգտագործվել է Համալսարանի ինստիտուցիոնալ ինքնավերլուծության գործընթացում:

Համալսարանը ընդունում է, որ որակի ապահովման ներքին համակարգը կայացման փուլում է, այսինքն՝ դեռևս սպասվում է, որ պետք է մշակվեն նոր մեխանիզմները, որոնցով կապահովվեն անհրաժեշտ հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար:

10.7. ՀԱԱՀ-ը պլանավորում է առանձին քայլերի, ինչպես նաև Համալսարանի պաշտոնական կայքի և «ՀԱՄԿ» պաշտոնաթերթի օգնությամբ ապահովել իր գործունեության թափանցիկությունը ներքին և արտաքին շահակիցների առջև:

Համալսարանի կայքում առանձին «Որակի ապահովում» էջով տեղեկատվություն է ներկայացվում բուհի առաքելության, կրթության որակի ոլորտում նրա վարած քաղաքականության, որակի ապահովման ներքին համակարգի կառուցվածքի մասին և այլն: Համալսարանը իր գործունեության թափանցիկության ապահովման մեկ այլ մեխանիզմ է դիտարկում ներքին շահակիցների հետ տեղի ունեցող պարբերական հանդիպումները, որոնք ուղղված են որակի ներքին ապահովման համակարգի գործընթացում նրանց ներգրավմանը:

Որակի ապահովման ներքին համակարգը որոշակի գործընթացներ է իրականացնում հաստատության գործունեության թափանցիկությունը ապահովելու համար, սակայն հարկ է

նշել, որ դրանք հստակ պլանավորված չեն և չկան մեխանիզմներ, որոնց միջոցով գնահատվում է ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՀԱԱՀ-ն ունի որակի ներքին ապահովման քաղաքականություն, սակայն քիչ են հավաստող փաստերը, որ այդ քաղաքականությունը գործում է: Բացի այդ, բուհը չի ներկայացնում այնպիսի կոնկրետ միջոցառումներ, որոնք կարող էին ցուցադրել կատարված աշխատանքները տվյալ ոլորտում: Համապատասխանաբար, չկան այնպիսի վերլուծություններ կամ բարելավման փոփոխություններ, որոնց հիման վրա կարելի լիներ գնահատել բուհի որակի ապահովման քաղաքականությունն ու ընթացակարգերը: Ներկայումս համալսարանում որակի ապահովման հիմնական շարժիչ ուժն են հանդիսանում ավելի շատ արտաքին պահանջները, սակայն այդպիսի մոտեցումը նույնպես կարող է նպաստել ինքնակարգավորման կարողությունների զարգացմանը:

Չնայած համալսարանը ներկայացնում է, որ որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով տրամադրվում է մարդկային, նյութական և ֆինանսական անհրաժեշտ ռեսուրսներ, սակայն պարզ չէ, թե ինչքանով են այդ ռեսուրսները բավարարում համալսարանի որակի ներքին ապահովման գործընթացների արդյունավետ կառավարմանը:

Ներքին և արտաքին շահակիցները ներառված են որակի ապահովման գործընթացներում, սակայն նրանց ընդգրկվածությունը արտահայտվում է միայն ուսումնական գործընթացի վերահսկողության իրականացմամբ, որը չի նպաստում որակի մշակույթի ձևավորմանը: Շահակիցների պասսիվության պատճառներից կարող է լինել նրանց համար համալսարանական գործընթացների թափանցիկությունը ապահովող և դրանց որակի մասին օբյեկտիվ տեղեկատվություն տրամադրող, ինչպես նաև համապատասխան գնահատման մեխանիզմների բացակայությունը:

Այնուամենայնիվ, որակի ապահովման ներքին համակարգը կայացման փուլում է և ընթանում են որոշակի գործընթացներ, սակայն դեռևս սպասվում է, որ պետք է մշակվեն մեխանիզմները, որոնցով կապահովվի անհրաժեշտ հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. ՀԱԱՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը **ՉԱՓԱՆԻՇ 10**-ի պահանջներին ***մասամբ է բավարար:***

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ. Անհրաժեշտ է.

- մշակել ՀԱԱՀ-ի կրթության որակի ապահովման քաղաքականությանը համապատասխան ընթացակարգեր և դրանք համակարգել նորմատիվային փաստաթղթերի փաթեթով, ձևավորել որակի ապահովման ձեռնարկ,
- ստեղծել մեխանիզմներ որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով համալսարանի տրամադրած մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների բավարարությունը պարզելու համար,
- վերանայել և բարելավել որակի ներքին ապահովման գործընթացներին ներքին և արտաքին շահակիցների մասնակցության մեխանիզմները՝ ավելի լայնացնելու նրանց ընդգրկվածությունը,

- մշակել կրթության որակի ապահովմանն ուղղված կառուցվածքային և բովանդակային փոփոխությունների արդյունավետությունը բացահայտող մեխանիզմներ, դրանց հիման վրա կատարել պարբերական գնահատումներ,
- համակարգել և կանոնակարգել ներքին և արտաքին շահակիցների համար համալսարանական գործընթացների թափանցիկությունը ապահովող և դրանց որակի մասին օբյեկտիվ տեղեկատվություն տրամադրող, ինչպես նաև համապատասխան գնահատման մեխանիզմներ,
- վերանայել տեղեկատվության հավաքման քաղաքականությունն ու ընթացակարգերը, գործարկել համապատասխան մեխանիզմներ այն միտումով, որ դրանք ձևավորեն անհրաժեշտ հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման համար:

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մարինկա Բաղդասարյան: Ստացել է էլեկտրամեխանիկայի ոլորտում դիպլոմավորված մասնագետի որակավորում: 1992թ.-ին ստացել է տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան՝ «Անկոնտակտ հոսանքաչափիչ սարքի վերափոխիչի հաշվարկի մեթոդ» թեմայով, իսկ 2003թ.-ին տեխնիկական գիտությունների դոկտորի գիտական աստիճան՝ «Հանքաքարի մանրացման տեխնոլոգիական գործընթացի էլեկտրասպառման արդյունավետության մեծացման մեթոդների մշակում» թեմայով: 1996թ.-ին ստացել է դոցենտի, իսկ 2004թ.-ին պրոֆեսորի գիտական կոչում: Հետազոտություններն ընգրկում է տեխնիկական ոլորտը: Զբաղեցնում է ՀՊՃՀ էլեկտրական մեքենաների և ապարատների ամբիոնի վարիչի (2006թ.), "Էլեկտրամեխանիկա և էլեկտրառադիոնյութեր" բազային գիտահետազոտական լաբորատորիայի գիտական ղեկավարի (2008.-ից) պաշտոնները: Էլեկտրամեխանիկական համակարգերի կառավարման, հետազոտման, լավարկման և մշակման ոլորտում շուրջ 100 գիտական աշխատությունների, այդ թվում՝ 2 մենագրության և 8 գյուտի արտոնագրի հեղինակ է: Պարբերաբար մասնակցել է Մոսկվայի էներգետիկայի ինստիտուտի կազմակերպած՝ «Էլեկտրամեխանիկա և էլեկտրատեխնոլոգիա», «Էլեկտրատեխնիկական նյութերի ֆիզիկատեխնիկական պրոբլեմներ», «Էլեկտրատեխնոլոգիաների ֆիզիկատեխնիկական պրոբլեմներ» միջազգային գիտաժողովներին: Անցել է ՌԱԱԿ վերապատրաստումները, եղել է ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձարկման փորձագիտական խմբի ղեկավար:

Maria-Jose Lemaitre. Has a PhD degree in education. Positions she has held are: Member of the staff of the Science and Technology program in Cinda (1977 – 1983); Coordinator of the Program on Education at Corporación de Promoción Universitaria, CPU (1984 – 1991); Head of the Secondary Education Component in the Program for the Improvement of Quality and Equity of Primary Education (1990 – 1994); National Coordinator of the Program for the Improvement of Quality and Equity of Secondary Education (1994 – 1997); Head of the Quality Assurance Component in the Program for the Improvement of Quality and Equity of Higher Education (1998 -2006); Secretary General of the Consejo Superior de Educación and head of the technical staff at the Consejo (1990- 1998); Secretary General and head of the technical staff at the Comisión Nacional de Acreditación (1998 to 2007); Consultancy work for the Governments and higher education institutions of Argentina, Barbados, Bolivia, Colombia, Costa Rica, Honduras, Nicaragua, Palestine, Paraguay, Trinidad and Tobago, Uruguay, dedicated to policy design, evaluation and the enhancement of secondary and higher education (1998-2008); Evaluator of the effectiveness of the implementation of quality improvement funds for higher education institutions in Bolivia (2006) and Palestine (2008); Consultancy work on quality assurance and higher education policy for the Interamerican Development Bank on Secondary and Higher Education in El Salvador, Honduras, Nicaragua and Ecuador, and for the World Bank in Cambodia, Indonesia, Palestine, Algeria and Colombia (2002–2008); Chair of the international team charged by DAAD (2004); Representative of the Chilean Government in the Working Group of Experts in Accreditation and Assessment (1997 – 2002); Representative of the Chilean Government in the Higher Education Commission of the Educational Sector of MERCOSUR (2001 – 2005); Member of an international group of experts charged with the external assessment of the quality assurance arrangements at the United Arab Emirates (2003-2004); Member of external peer review teams in accreditation visits organized by EQUIS (European Quality Improvement System), of the European Foundation for Management Development (efmd) (2001); by the New Zealand Vice Chancellors Committee (2005); by ENQA (European Association for

Quality Assurance) (2007); and chair of the external review team of the HEQC (Higher Education Quality Council) in South Africa (2008); Academic Director of the International Institute for Quality, in charge of consultancy projects, evaluation and accreditation of higher education institutions and programs (2002 to date); Member of an international group of experts charged with the analysis of the Estonian higher education system within the framework of a comparative study carried out by OECD (2006); International speaker on 'Enhancing Quality and Relevance of Higher Education' at the National Forum on Jordan's Competitiveness on Higher Education for Building a Knowledge economy in the MENA Region (2007); Chair of an international team in charge of the development of Guidelines for Self Assessment and Strategic Planning for Tertiary Education in Palestine and of providing training to representatives from TEIs (2007); Chief advisor to the Minister of Education (2008); Member of a team in charge of the pre-assessment of Universidad Tecnológica de Bolivar, Cartagena, Colombia, in preparation for institutional accreditation (2009); Director of an international ALFA III project (2009 – 2011); Chair of an international team in charge of the external review of a DAAD/IUCEA project dedicated to capacity building and the development of a Quality Assurance Framework for the East African Region (2010-2011); Consultant for the preparation of a quality assurance project for the Republic of Azerbaijan, (2011); Consultant for the implementation of the quality assurance system in the Republic of Georgia (2011); Executive Director of CINDA (2009 to date). Her publications include books, articles and reports on quality assurance, higher education policy, educational reform, secondary education.

Պիպոյան Սամվել: 1987թ.-ին ստացել է դիպլոմավորված մասնագետի որակավորում կենսաբանության ոլորտում: 1993թ.-ին ստացել է կենսաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան՝ "Արծաթափայլ կարասի ձևաբանակենսաբանական և էկոլոգիական առանձնահատկությունները Հայաստանի ջրակալներում" թեմայով, իսկ 2010թ.-ին՝ կենսաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճան՝ "Հայաստանի ձկնաշխարհը և նրա ձևավորման փուլերը" թեմայով: Հետազոտություններն ընդգրկում են կենդանաբանության, մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտները: Զբաղեցրել է ՀՀ ԿԳՆ նախնական և միջին մասնագիտական կրթության բաժնի պետի (1991-2008թթ), ՀՀ ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտի ՄԿՈՒԶԱԿ-ի հիմնադիր տնօրենի (2008-2010թթ.), Ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմի բաժնի պետի (2010թ.-ից մինչ այժմ) պաշտոնները: 2012 թ-ից Խ.Աբովյանի անվ. պետական մանկավարժական համալսարանի կենսաբանության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի պրոֆեսոր է: Կենսաբանության ոլորտում ավելի քան 85 գիտական հոդվածի, 1 մոնոգրաֆիայի, 1 ուսումնական ձեռնարկի, մասնագիտական կրթության ոլորտում՝ ավելի քան 15 գիտական հոդվածի և թեզիսի, 1 ուսումնական ձեռնարկի, 4 գիտական հետազոտությունների /զեկույցների ձևով/, հեղինակ է: Հանդիսանում է "Մասնագիտական կրթության բարեփոխումներ" ՀԿ համահիմնադիր և խորհրդի անդամ, "Ցկյանս ուսումնառության Հայաստանյան լիգա" կազմակերպությունների միության հիմնադիր անդամ և խորհրդի անդամ, ՀՀ ԿԳՆ ՄԿՈՒ գյուղատնտեսագիտության ոլորտային հանձնաժողովի նախագահ, ԱՊՀ երկիր-մասնակիցների Մեծահասակների կրթության բազային կազմակերպության հասարակական խորհրդի անդամ, Մեծահասակների ուսումնառություն և կրթություն ողջ կյանքի ընթացքում" ՀԿ համահիմնադիր և խորհրդի անդամ, Մեծահասակների կրթության Իջևանի կենտրոնի խորհրդի անդամ, Մեղրու պետական քոլեջի կառավարման խորհրդի անդամ, Մ. Նալբանդյանի անվ. պետական մանկավարժական ինստիտուտի կառավարման խորհրդի անդամ, Նախնական և միջին մասնագիտական կրթության ոլորտում գյուղատնտեսության, կրթության, մշակույթի, շինարարության, սպասարկման, առևտրի,

էկոնոմիկայի ճյուղերի կրթական չափորոշիչների մշակման խորհուրդների անդամ, Նախնական և միջին մասնագիտական կրթության զարգացման միջգերատեսչական աշխատանքային խմբի քարտուղար: Մասնակցել է 20-ից ավելի միջազգային գիտաժողովների մասնագիտական կրթության ոլորտում:

Մերի Բաղալյան: 1994 թ.-ին ստացել է տնտեսագիտության դիպլոմավորված մասնագետի որակավորում: 2005 թ.-ին ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան՝<<Բարձրագույն կրթության զարգացման նյութական խթանման կատարելագործման հիմնախնդիրները (ՀՀ օրինակով)>> թեմայով: 2006թ.-ին ստացել է տնտեսագիտության մասնագիտության դոցենտի գիտական կոչում: Գիտական հետազոտությունների շրջանակը ընդգրկում է բարձրագույն կրթության ոլորտում ֆինանսական հարցերը, դրանց հիման վրա նյութական խթանման, մոտիվացիայի հիմնախնդիրները, ինչպես նաև բարձրագույն կրթության ոլորտում տեղի ունեցող բարեփոխումների ընթացքի վերլուծությունը ՀՀ-ում: Մասնակցել է հետբուհական, շարունակական կրթության, եվրոպական չափայնության խթանման, բոլոնիայի գործընթացի շրջանակներում կրթության եռաստիճան համակարգի ներդրման հիմնախնդիրների վերաբերյալ միջազգային գիտաժողովներին: Աշխատանքային գործունեության ընթացքում աշխատել է որպես դոցենտ ՀՊՏՀ-ում, ներկայումս ՀՊՏՀ-ի Կառավարման ֆակուլտետի դեկանի տեղակալն է:

Սյուզաննա Ազիզյան: Երևանի «Գլաձոր» համալսարանի ֆինանսներ ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանող: Մասնակցել է Ուսանողական գիտական ընկերության աշխատանքներին՝ «Փոքր և միջին բիզնեսի էությունը և դերը շուկայական տնտեսության մեջ» և «Շրջակա միջավայրի քիմիական աղտոտվածությունը և համաճարակների առաջացման հավանականությունը» թեմաներով և ստացել պատվոգրեր:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Փորձնական ինստիտուցիոնալ հավատարմագրման նպատակով փորձագիտական գնահատում իրականացնող խմբի այցի Հայաստանի ազգային ագրարային համալսարան

3.12.2012թ. – 7.12.2012 թ.

3.12.2012թ.

		Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1	Փորձագիտական խմբի հանդիպում	9:30	9:45	30 րոպե
2	Հանդիպում ռեկտորի հետ	10:00	10:30	30 րոպե
3	Հանդիպում ինքնավերլուծությունը իրականացրած աշխատանքային խմբի հետ	10:30	12:00	90 րոպե
4	Հանդիպում պրոռեկտորների հետ	12:10	13:40	90 րոպե
5	Ընդմիջում (փորձաքննության խմբի քննարկումներ)	13:45	14:45	60 րոպե
6	Հանդիպում դեկանների և ուսումնական գործընթացի կառավարման ստորաբաժանումների ղեկավարների հետ	14:50	16:20	90 րոպե
7	Փաստաթղթերի ուսումնասիրություն	16.30	18:00	90 րոպե
8	Փորձագիտական խմբի քննարկումներ	18:00	19:00	60 րոպե

4.12.2012թ.

		Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1	Փորձագիտական խմբի հանդիպում	9:00	9:30	30 րոպե
2	Հանդիպում ԿԲՌՊՈՎԻ վարչության աշխատակազմի և ԿՈՎԱ հանձնախմբի հետ	9:30	11:00	90 րոպե
3	Հանդիպում ամբիոնների վարիչների հետ	11:30	13:00	90 րոպե
4	Ընդմիջում (փորձաքննության խմբի քննարկումներ)	13:30	14:30	60 րոպե
5	Հանդիպում ուսանողության ներկայացուցիչների հետ /տեղացի ուսանողներ/	14:45	16:15	90 րոպե
6	Ռեսուրսների դիտարկում / Փաստաթղթերի ուսումնասիրություն	16:30	18:00	90 րոպե
8	Փորձագիտական խմբի քննարկումներ	18:00	19:00	60 րոպե

5.12.2012թ.

		Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1	Փորձագիտական խմբի հանդիպում	9:00	9:30	30 րոպե
2	Հանդիպում ստորաբաժանումների ղեկավարների հետ	9:30	11:00	90 րոպե
3	Բաց հանդիպում	11:30	12:00	30 րոպե
4	Ռեսուրսների դիտարկում	12:00	13:30	90 րոպե
4	Ընդմիջում (փորձաքննության խմբի քննարկումներ)	13:30	14:30	60 րոպե
5	Հանդիպում դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ	14:45	16:15	90 րոպե
6	Ռեսուրսների դիտարկում / Փաստաթղթերի ուսումնասիրություն	16:30	18:00	90 րոպե
7	Փորձագիտական խմբի քննարկումներ	18:00	19:00	60 րոպե

6.12.2011թ.

		Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1	Փորձագիտական խմբի հանդիպում	9:00	9:30	30 րոպե
2	Հանդիպում փորձագետների կողմից ընտրված կազմի հետ	9:30	11:00	90 րոպե
3	Հանդիպում դասախոսների հետ անհատական հանդիպումներ	11:15	12:45	90 րոպե
4	Ընդմիջում (փորձաքննության խմբի քննարկումներ)	13:00	14:00	60 րոպե
5	Հանդիպում ուսանողների հետ /արտասահմանցի ուսանողներ/	14:15	15:45	90 րոպե
6	Ռեսուրսների դիտարկում /Փաստաթղթերի ուսումնասիրություն	16:00	18:00	120 րոպե
7	Փորձագիտական խմբի քննարկումներ	18:00	19:00	60 րոպե

7.12.2011թ.

		Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1	Փորձագիտական խմբի հանդիպում	9:00	9:30	30 րոպե
2	Հանդիպում փորձագետների կողմից ընտրված կազմի հետ	9:30	11:00	90 րոպե
3	Հանդիպում գիտության դեպարտամենտի աշխատակազմի	11:30	13:00	90 րոպե
4	Ընդմիջում (փորձաքննության խմբի քննարկումներ)	13:00	14:00	60 րոպե
5	Ռեսուրսների դիտարկում /Փաստաթղթերի ուսումնասիրություն	14:00	15:45	120 րոպե
6	Հանդիպում ռեկտորի հետ	16:00	16:30	30 րոպե
7	Փորձագիտական խմբի քննարկումներ	18:00	19:00	60 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

N	ՓԱՍՏԱԹՂԹԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՉԱՓԱՆԻՇ
1.	Պրակտիկայի գնահատման ձևաթերթեր	1
2.	Ինքնավերլուծության 10.9 հավելվածը	1
3.	Խորհուրդների որոշումների հիման վրա իրականացված աշխատանքների մասին հաշվետվություններ և զեկուցագրեր	2
4.	Համալսարանի նոր ռազմավարական պլանը	2
5.	Կարճաժամկետ և միջնաժամկետ պլանավորման փաստաթղթեր	2
6.	Ֆակուլտետային ուսումնական, հետազոտական և մեթոդական-կազմակերպչական աշխատանքների տարեկան պլանները	2
7.	Արձանագրություններ գործունեության որակական գնահատականների մասին	2
8.	Ֆակուլտետային ուսումնական, հետազոտական և մեթոդական-կազմակերպչական աշխատանքների տարեկան պլանները	2
9.	Էթիկայի կանոնները	2
10.	Որակի ապահովման ձեռնարկի սնագիր տարբերակը	2
11.	"ՀՊԱՀ 2012-2017 ռազմավարական պլանի" նախագիծը	2
12.	ՄՈՒՀ-ի գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրության համար կիրառվող մեխանիզմները և գործիքները սահմանող փաստաթուղթը	2
13.	Կրեդիտային համակարգի ուսումնասիրման համար անհրաժեշտ ուղեցույցը	2
14.	Հարցազրույցների, գրականության և փաստաթղթերի ուսումնասիրություններից ստացված տվյալների հիման վրա ստացված վերլուծությունների արձանագրությունները	2
15.	Որակի կառավարման սկզբունքով անհրաժեշտ քաղաքականությունների և ընթացակարգերի նախագծերը	2
16.	Մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման և այլ գործընթացների արդյունավետությունը գնահատող մեխանիզմների նախագծերը	2
17.	Հարցման թերթիկի լրացված օրինակները	2
18.	Ամբիոնների տարեկան հաշվետվությունները ըստ մշակված ուղեցույցի	2
19.	Ֆինանսական պլանի վերլուծության, Ֆինանսական հոսքերի ուսումնասիրության, ծախսերի կառուցվածքի ուսումնասիրության համար փաստաթղթերը	2
20.	Արձանագրություններ որակական գնահատականների մասին	2
21.	ՀՊԱՀ կոլեկտիվի ներկայացուցիչների ժողովի արձանագրությունները, այդ արձանագրությունների հիման վրա ընդունված որոշումները, արձակված հրամանները	2
22.	ՀՊԱՀ կոլեկտիվի ներկայացուցիչների ժողովի նախագահի հաշվետվությունները	2
23.	ՀՊԱՀ կոլեկտիվի ներկայացուցիչների ժողովի և խորհրդի կազմերը	2
24.	ՀՊԱՀ գիտական խորհրդի կազմը	2
25.	ՀՊԱՀ գիտական խորհրդի նիստերի արձանագրություններ, այդ	2

	արձանագրությունների հիման վրա ընդունված որոշումները, արձակված հրամանները	
26.	Վերլուծություններ, ուսումնասիրություններ խորհուրդների գործունեության արդյունավետության վերաբերյալ	2
27.	Ուսումնական գործընթացի կազմակերպման կրեդիտային համակարգի ներդրման ծրագիրը և ժամանակացույցը	2
28.	Կրթական ծրագիրի փաթեթներ	3
29.	Ուսումնական պլան և առարկայական ծրագրեր՝ պետական կրթական չափորոշիչների և ՈԱԾ-ի պահանջները բավարարող	3
30.	Ընտրանքային առարկայական ծրագրեր	3
31.	Դասընթացի մեթոդական ապահովվածության վերաբերյալ ցուցումներ /դասախոսությունների, լաբորատոր, գործնական աշխատանքների մեթոդականցուցումներ, հարցաշարեր, քննատոմսեր/	3
32.	Ավարտական աշխատանքներ	3
33.	Ավարտական աշխատանքների հաստատման հրամաններ/վերջին 3 տարվա համար/	3
34.	PowerPoint ծրագրի միջոցով պատրաստված դասախոսություններ	3
35.	Դասընթացների առարկայական ծրագրերը սիլլաբուսների ձևով	3
36.	Անասնաբուժական ֆակուլտետի ՄԿԾ-երի վերաբերյալ Պորտուգալիայի, Ֆրանսիայի, Իսպանիայի անասնաբուժական ֆակուլտետների, Տեխասի A&M համալսարանի փորձաքննության և գնահատման եզրակացությունները	3
37.	Անասնաբուժական ֆակուլտետի ՄԿԾ-երի վերաբերյալ Պորտուգալիայի, Ֆրանսիայի, Իսպանիայի անասնաբուժական ֆակուլտետների, Տեխասի A&M համալսարանի փորձաքննության և գնահատման եզրակացությունները	3
38.	Փաստաթուղթ, որը կփաստի, որ համալսարանը տրամադրում է ֆինանսական միջոցներ հետազոտական բազայի համալրման համար	6
39.	Ուսանողների կողմից իրականացվող հետազոտական աշխատանքներ	6
40.	Ուսումնական պլան կամ առարկայական ծրագիր, որտեղ ներառված են հետազոտությունների արդյունքները	6
41.	Համալսարանում իրականացված արտա-սահմանյան առաջատար համալսարանների և գիտական կենտրոնների հետ գիտական համագործակցության ընդլայնման ապահովմանը միտված, կնքված պայմանագրեր	6
42.	Իրականացվող կարճաժամկետ և միջնաժամկետ ծրագրերի հաստատված ցուցակը	6
43.	Իրականացվող կարճաժամկետ և միջնաժամկետ ծրագրերի մոնիթորինգի արդյունքները	6
44.	Իրականացվող կարճաժամկետ և միջնաժամկետ ծրագրերի հաշվետվությունները	6
45.	Ինքնավերլուծության 6.1 աղյուսակում ներկայացված կարճաժամկետ և միջին ժամկետի հետազոտական ծրագրերի բնույթը, բովանդակությունը, իրականացման ժամկետները, ստացված արդյունքները	6
46.	Կարճաժամկետ և միջին ժամկետի գիտական ծրագրեր	6
47.	2007-2012թթ անցկացված գիտաժողովների ծրագրերը	6
48.	Երիտասարդ հետազոտողների կողմից հրատարակված հոդվածների	6

	ցանկն ըստ ամսագրերի կամ այլ պարբերականների	
49.	ԱՊՀ և օտարերկրյա ամսագրերի ցուցակը, որտեղ հրատարակվել են ՀՊԱՀ աշխատակիցների հոդվածները	6
50.	Հոդվածների տպագրական ծախսերի վճարման փաստը հաստատող փաստաթուղթը	6
51.	Գիտական հոդվածներ, որոնք տպվել են միջազգային գրախոսվող ամսագրերում, համալսարանի գիտաշխատողների կողմից	6
52.	Մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար իրականացված հարցման թերթիկները և դրանց ամփոփումները	7
53.	Ձեռչերի տրամադրման պայմաններ, հիմքեր, ցուցակներ	7
54.	Դեկանատներում պահպանվող փաստաթղթերի թղթապանակները	7
55.	Անասնաբուծական և անասնաբուժական լաբորատորիաներում առկա գույքի ցուցակները	7
56.	Ամբիոններում պահպանվող փաստաթղթերի թղթապանակները	7
57.	Գրադարանի կատարած աշխատանքների հաշվետվություններ	7
58.	Գրասենյակի գրանցամատյանները	7
59.	2008-2012թթ. Հրատարակված նոր անուն մասնագիտական գրականություն ցուցակը	7
60.	Արտակարգ իրավիճակներում համալսարանի մասնաշենքերից ուսանողների և աշխատակիցների տարհանման պլան-սխեման	7
61.	Ռեկտորի հրամանով (№ 136/ԱԾ 02. 02. 2012 թ.) հաստատված քաղ. պաշտպանության պլանը	7
62.	ՀՊԱՀ որակի ապահովման քաղաքականություն /հայեցակարգ/	10
63.	Որակի վերահսկման կանոնակարգը	10
64.	Որակի վերահսկման պլանը	10
65.	Որակի կառավարման մեթոդաբանության և այլ փաստաթղթեր	10
66.	ՄՈՒՀ-ն կողմից մշակած որակի ապահովման քաղաքականության փաստաթուղթը	10
67.	Որակի վերահսկման խորհուրդի և հանձնախումբի անցկած աուդիտների մասին տվյալները	10
68.	Որակի վերահսկման հանձնախմբի իրականացրած գործունեության հաշվետվությունը	10
69.	Ուսանողների ներգրավվածությունը հաստատող փաստաթղթերը	10
70.	ԿԲՌՊՈՎԻ վարչությունում տվյալների բազան	10
71.	Կրթական գործունեության մշտադիտարկումն ու աուդիտի իրականացումը հաստատող փաստաթուղթը	10
72.	ԿԲՌՊՈՎԻ վարչության գործավարական փաստաթղթեր /նիստերի արձանագրություններ, զեկուցագրեր, նամակներ և այլն/	10

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՅՑԵՐԸ

1. ՀԱԱՀ պատմության թանգարան
2. Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն
3. Գրադարան և ընթերցասրահներ
4. Ագրոնամիկական ֆակուլտետի դեկանատ
5. Ագրոէկոլոգիայի ամբիոն
6. ՀԱԱՀ գիտաուսումնական թանգարան
7. Հիդրոտեխնիկական կառուցվածքների և հողերի բարելավման ամբիոն
8. Պոմպերի լաբորատորիա
9. Հիդրոտեխնիկական կառուցվածքների լաբորատորիա
10. Հիդրավլիկայի լաբորատորիա
11. Նյութերի դիմադրության լաբորատորիա
12. Լեզվի կենտրոն
13. ՀՏԿ և Հիդրոմելիորացիայի ամբիոն
14. Տնտեսագիտության ֆակուլտետի դեկանատ
15. Ագրոբիզնեսի դեպարտամենտ
16. Բալահովիտի ուսումնափորձարարական բազա
17. Տնտեսագիտության տեսության ամբիոն
18. Ուսումնամեթոդական վարչություն
19. Շարունակական ուսուցման և մասնաճյուղերի ուսուցման բաժին